



ԿՐՕՆԱ-ԵԿԵՂ ԵՅԱԿԱՆ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ

Ա. ՏԱՐԻ

1 ՅՈՒՆՈՒԱՐ 1910

ԹԻԻ 4

ԽՄԲԱԴՐԱՊԵՑ
ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

Վ. Ա. ՐԻԶ
ՂԵՒՈՆԴ Մ. Վ. ԴՈՒՐԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀՈՐՈՎՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ
ՄԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ
ԱՆՑԵԱԼԷՆ ԴԷՊԻ ԱՊԱԳԱՆ
ԱՒԵՏԱՐԱՆԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ
ԱՇԽԱՐՀԻ ՎԻՃԱԿԸ ՅԻՍՈՒՍԻ ԾՆՆԴԵԱՆ ԱՏԵՆ
ԺԱՄԱՆԱԿԸ
ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՒԹԻՒՆ
ԲԱՐԵԿՈՐԾՈՒԹԻՒՆԸ
ՔՈՒ ՏԱՃԱՐԻԴ ՄԷՋ (ՔԵՐԵՐՈՒՄԸ)
ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՊԱՄՏՈՒԹԻՒՆԸ
Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵԻ ԿԱՄ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԹԱ-
ԳԱԽՈՐՈՒԹԵԱՆ ԲԱՐՉՈՒՄԸ

ԴԱՐՍԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՑ
Ծ. Ե. Դ.
ՉԱՐՄԱՅՐ ԴԱՀԱՆԱՑ
ՄԵԿԵԻԶ
ԹՐԳՄ. ՀՐԱՆՑ ՍԱՄՈՒԷԼ
ԿՈՐԻՆ ՎԱՐԴԱՊԵՑ
ՊԱՐԴԵԻ ՎԱՐԴԱՊԵՑ
ՑԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՑ
ԴՐ. ԴԱԼՈՒՍՏԵԱՆ
ԱՐԻՍՏԱԿԷՍ ԲԶՆԵ, ՀԻՍԱՐԼԵԱՆ
ԴԱՐՍԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՑ

Գիև 50 փարսյ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՕՍՄ. ԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Պապր Այի հասցեի Սեփեթիլեր փողոց Թիւ 27

Գաւառներէ ինքնաբերապար զիմուսներ կը հասնին Վարչաւթեան՝ կրօնաթեր-
թիս բաժանորդագրուելու ինչպանօք :

Ի պատասխան այս խնդրանքներու կը յայտարարենք թէ՛ այսպիսիներու և
թէ՛ ուրիշ բաժանորդ ըլլալ փափաքողներու թէ՛ կրնան զիմուս իրենց պատկանած
Առաջնորդարաններու կամ Թաղ . Խորհուրդներու և կամ յատկապէս նշանակուած
գործակալներու և անոնց միջոցաւ իրենց զիմուսը ներկայացնել և ստանալ թեր-
թերը :

Ի զիւրութիւն կը ծանուցանենք ի ստորեւ անունները այն առաջնորդներուն
և գործակալներուն , որոնց գործակցութիւնը խնդրած ենք թերթիս ի նպատակ :

ՅՈՒՑԱԿ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆՑ

"ՏԱՃԱՐ" ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

Ազրիանուպոլիս
Աղեքսանդրիա
Ամերիկա
Այնքապ
Ասաբազար
Արմաւ
Աֆիօն-Գարահիսար
Դաւաթիս
Դօնիա
Եգիպտոս
Եդեսիա
Եօզրա
Երզնկա
Եւդոկիա
Զմիւռնիա
Էսկիսէհիւր
Խարբերդ
Կարիս
Կեսարիա
Կիրասոն
Հալեպ
Մանչեսթըր
Մարաւ
Մարզուան

Առաջն . Տեղապահ Տ . Մատթէոս Վրդպ . Ինճէեան
Միհրան էֆ . Թէլեան
Առաջ . Փոխանորդ Տ . Պօղոս Վրդպ . Գաֆթանեան
Տ . Գարեգին Քնյ . Պօղարեան
Դրիգոր էֆ . Ակօնայեան
Փոխ-Վանահայր Տ . Մեարոպ Մ . Վրդպ . Նարայեան
Տ . Գալուստ քնյ . Տ . Գալուստեան
Առաջնորդ Տ . Բարդէն Մ . Վրդպ . Կիւլէտերեան
Տ . Յովհաննէս Քնյ . Գույումճեան
Առաջնորդ Տ . Մկրտիչ Մ . Վրդպ . Աղաւաղի
Ք . Թիւրաքեան էֆ .
Առաջնորդ Տ . Խորէն Մ . Վրդպ . Դիմաքեան
« Տ . Երուանդ Վրդպ . Փէրտաճեան
Առաջն . Տեղապահ Տ . Արտաւաղ Վրդպ . Գալէնտերեան
« Փոխանորդ Տ . Յովհաննէս Ա . Քնյ . Միհրապեան
Տ . Գալուստ քնյ . Տ . Գալուստեան
« Տեղապահ Տ . Գէորգ Մ . Վրդպ . Աւանեան
Առաջնորդ Տ . Սմբատ Մ . Վրդպ . Ստատիթեան
« Տ . Տրդատ Ս . Եպիսկ . Պալեան .
Մաթոս էֆ . Թոքատեան
Առաջն . Տեղապահ Տ . Շահէ Վրդպ . Գասպարեան
Առաջնորդ Տ . Գէորգ Ս . Եպիսկ . Իւթիւճեան
Տ . Հմայեակ Քնյ . Վարժապետեան
Յակոբ էֆ . Սրապեան



ԿՐԹՆԱ-ԵԿԵՂ ԵՑԱԿԱՆ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ

Ա. ՏԱՐԻ

Ի ՅՈՒՆՈՒԱՐ 1910

ԹԻԻ 4

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

Ի Ի

ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

Այսօրը երեկի նորոգութիւնն է,
եւ փաղը այսօրի վերածնութիւնը

Մեր մոլորակը չըջան մըն ալ բո-
լորեց արեւին շուրջը. չըջան մը՝ ա՛յն-
քան սովորական երկրագունդին հա-
մար, որքան ահաւոր և անակնկալ
դէպքերով ընդհատուած անոր արեւե-
կան մէկ մասի ժողովուրդին համար:
Լոյսի և խաւարի յաւիտենական ոգո-
րումին մէջ, որուն թափը եղած է
միշտ մասնաւորապէս Արեւելքը, այս
անգամ ալ յաղթական գոռումով մը
պայթեցաւ Խաւարի դիւակուռ շանթը
Ասիայի ազգերուն ամէնէն հինին և

բաղմաշարժարին՝ Հայի գլխուն, այն
ատեն՝ երբ Ազատագրումի աւետա-
բեր փողը կը հնչէր «Աստուծոյ պա-
տուհաս» ձէնկիզխաններու, Լէնկթի-
մուրներու, արխանախում (Նավուզ)
Սէլիմներու, Շահ-Աբբասներու, այլա-
սերումի ծնունդ-Նէնիչէրներու և
մարդակեր Համիտներու, կարմիր եա-
քաղաւաններու ահռելի սպառնալիքին
տակ սահմուկած ժողովուրդներու ա-
կանջին: Կարելի՞ է համարձակիլ յայ-
տարարելու թէ ճակատագրական էր
այս չարաշուք վճիռը, կամ երկնառաք,
ինչպէս սովոր է կրկնել Հայ ժողո-
վուրդի մէկ մասը մեր պապերուն նը-
ման չեմ գիտեր ինչ յուսահատ հա-
մակերպութեամբ մը և կորովազուրկ
ձեռնթափութեամբ մը, որոնք իրենց
դատապարտելիութիւնով մէկտեղ՝ սև

ու տխուր հոգեբանութեան մը ան-
խարդախ արտայայտութիւններն են,
երբ միւս կողմէ անհերքելի ճշմար-
տութիւն մ'է թէ ամէն պատահար
անհրաժեշտօրէն իր հետ կը բերէ
մարդկային պատասխանատուութեան
որոշ բաժին մը: Չիկայ խիղճ մը, թէ
իսկ քարի մը մէջ ծածկուած ըլլայ
այն, որ արդարացնէ անիրաւուած ամի
մը դժբախտ մարդկութեան գէմ ար-
ձակուած ոճիրի վճիռ մը, բարբարոս
ամբօխի մը խաւարին խաւերէն ե-
կած ըլլայ այն՝ թէ բռնաւոր իշխա-
նաւորի մը արիւննաներկ գահերէն:
Կեանքի գործառնութիւններու տրա-
մաբանօրէն հետեւական պատահար-
ներու պատասխանատուութիւնը գե-
րագոյն Բմահաճոյքի մը— չեմ ըսեր
Կամբի՝ որ տիեզերական ինստիտու-
ժիւնի մը անքննադատելի արտայայ-
տութիւն է միայն— վերագրել՝ Աս-
տուածը մարդացնել՝ տկարացնել, և
մարդը անբանացնել՝ ոչնչացնել պի-
տի ըլլար: Անոնց գազանիքի լուծումը
ո՛չ մտացածին և անբարոյացուցիչ
Բախտի մը և ո՛չ ալ խորհրդաւոր մեռ-
ցնող Գիրի մը գոյութեան մէջ է, այլ
Պօտփի խիստ իրաւացի մէկ դատաս-
տանին մէջ թէ՛ homo homini lupus
(մարդը մարդուն համար գայլ մ'է):

Գերագոյն արամաբանութիւն մը
կայ ժամանակին մէջ, իմաստուն չըզ-
թայաւորում մը այն բոլոր վայրկեան-
ներուն մէջ որ Յաւիտենականութեան
մը մարդկայնօրէն նկատուած քթիթ-
ներն են: Ամէն ինչ, կեանքի ամէն
դիմայեղում, իւրաքանչիւր իրադար-
ձութիւն աստուածային իմացակա-
նութեան մը գրոշմը կը կրէ իր վը-
րայ. պատճառի և արդիւնքի անխը-
զելի կապակցութեան մը խոր կնիքը՝

որ տիեզերական ներդաշնակութիւնը
կը յարդարէ ու կը յանգաւորէ: Այս-
պէս, դժբախտութիւնը գիտակից թէ
անգիտակից վրիպանքի մը, սխալանքի
մը, զրկանքի մը և կամ զեղծումի մը
շատ բնական մէկ հետեւութիւնն է,
ինչպէս այսօրը երէկին և վաղը այս
օրին անվրիպելի յաջորդութիւնն ու
հզրակացութիւնն է: Տիեզերական
թուագիտական այս խիստ ճշտութիւ-
նը ոչ ոք և ոչինչ կրնայ խանդարել,
նոյնիսկ պատմութեան այն արտակա-
նանութիւնները՝ որոնք պարբերաբար
և յանկարծական ցնցումներով իրերու
բնական ընթացքը փոփոխելու և յե-
ղաշրջելու երեւոյթն ունին: Այս փո-
փոխութիւնը տեղի կ'ունենայ արդա-
բեւ, հակառակ մարդկային անտար-
բերութեան և կամ նոյնիսկ չարահը-
նարութեան՝ արդիւնքու համար յա-
ռաջդիմութեան այդպիսի վճռական
և անկասելի քայլ մը: Աստուածային
օրէնքը անփոփոխ է՝ իրերու եւ երե-
ւոյթներու փոփոխելիութեան մէջ: Ան
Սկիզբն է՝ որով կը գոյանան ներդաշ-
նակն ու աններդաշնակը, աշխարհա-
ծնական համակրութիւնն ու հակակ-
րութիւնը, դրականն ու ժխտականը,
և տիեզերական այս հակօրինութիւն-
ներն են որ կը պահեն Կեանքի հա-
ւասարակշռութիւնը: Պատմութեան
մեծ իրողութիւնները ապացոյցներ են
այս բոլորին, վասնզի անոնց մէջ փո-
փոխուող երեւոյթներն են որ կ'աճին
ու կը բազմանան անփոփոխ Օրէնքին
շուրջ: «Ամենեքեան (= հիմունք երկրի
և երկինք = Տիեզերք) որպէս զձորձս
մաշեացին, որպէս վերարկուս փափո-
խեացին զնոսա և փափոխեացես. բայց
դու նոյն իսկ ես, և ամբ քո ո՛չ ան-
ցանեն» (Սղմ. ՃԱ. 27, 28. եբր. Ա.

11, 12): — Գարերու ուղղափառ իմաստասիրութիւնն է այս:

Իրերու փոփոխելիութեան մէջ դրուած նպատակը տարակոյս չիկայ թէ ԲԱՐՆԵՐԻՋՈՒՄՆ է այսինքն նորոգութիւնը (դէպ ի լաւագոյնը) տիեզերական կամ մարդկային, ֆիզիքական կամ հոգեկան այն բոլոր գործառնութիւններուն՝ զորս երէկը կամ անցեալը ստեղծած է: Այսօրը երէկի վերկենցաղումն է, աւելի զօրեղ, աւելի կենսունակ և աւելի իմաստալից: Կը նշանակէ ուրեմն թէ՝ նորը իր հիմնունի հիւսիսն մէջ, անոր վերերեւումն ու բարեշրջումն է, և թէ՝ հինը միշտ նորոգութեան կարօտ՝ ատակ և անհրաժեշտօրէն տրամադիր է:

Պատմութեան դարաշրջանները, որոնցմով կը դասակարգուի—այսպէս բացատրենք—ժամանակը, մեզ կուտան այն պայծառ ապացոյցը թէ քաղաքակրթութիւնն ունի իր մակընթացութիւններն ու տեղատուութիւնները, որոշ ժամանակամիջոցով մը սահմանազօրած: Քաղաքակրթութեան այս մակընթացութիւնները իրենց սկզբնաւորումին մէջ կորովի ուժգնութեամբ մը շարժումի և գործունէութեան մէջ կը դնեն կեանքը՝ որ կը բեղմնաւորուի Բնութեան և Մարդուն ստեղծագործութիւններով, և հետըհետէ՝ ներքին շարունակական սպառումի մը կամ արտաքին կենսաբան ծծումի մը հետեւանքով՝ կը հասնին անկումի մը շրջանին, կը յաջորդեն տեղատուութիւններ՝ առաւել կամ նուազ տևողութիւնով մը: Բայց յաճախ ալ մինչեւ այդ անկումը այդ սպառած կամ ծծուած ոյժերը ամփոփուելով և զօրանալով անդգալա-

բարձր նոր թափով մը և նոր երեւոյթով մը կը վերածնին: Սպասուածը, այսպէս, նորոգութիւնն ու վերածրնութիւնը կ'ըլլայ տիեզերական ոյժերուն: Ասոր համար է որ կ'ըսեն թէ երկինքի տակ նոր բան չիկայ:

Ժեյ դարը փակումն եղաւ այն ամէնամութ դարաշրջանին, ե-ժե, որ ՄԻՋԻՆ ԴԱՐ անունով ծանօթ է աշխարհի: Այդ երկար վատախտարակ ժամանակամիջոցին մէջ Արեւմուտքը մասնաւորապէս իր անկումը տեսաւ, չնորհիւ այն շեղումներուն և զեղծումներուն՝ որոնցմով Պետութիւնն ու եկեղեցին, աւելի ճիշտ՝ կայսերական թագն ու քահանայապետական խոյրը, նիւթապաշտիկ գուհիկ մրցակցութիւնով մը՝ աշխարհը ընդհանուր անբարոյականութեան մը առաջնորդեցին: Օրէնքը՝ ատուածացաւ անիրաւութեան մականով և Կրօնքը անաստուածացաւ շահապաշտութեան հրամանակարգութիւնով (dogme): Միոյն Փարաւոնը եղաւ Կայսրը՝ որ հեզնեց Պետութիւնը և միւսին քուրմը հանդիսացաւ քահանայապետը՝ որ ծաղրեց եկեղեցին...

Ժամանակը պիտի պատժէր վեհապետական այդ հեզնանքը և քահանայապետական այդ ծաղրանքը:

Հայ ժողովուրդը, սկզբնաբար անհաղորդ Արեւմուտքի եկեղեցիին այդ անբարոյացումը բարացուցող կրօնական սնամէջ և բռնաւոր քաղաքականութիւն մը պարտկող կռիւներու և պայքարներու, հեռու հրամանակարգական (dogmatique) փրցուն ու ցամաք վիճարանութիւններէն, ինքն ալ սակայն վերջապէս տարուեցաւ ընդհա-

նուր պղտոր հոսանքէն, մանաւանդ որ հայ աշխարհի քաղաքական պատկերն ալ այնքան նպաստաւոր էր այդ թաւալգըր գահավիժումին:

ԺԶրդ գարը ո՛չինչ չփոխեց հայուն քաղաքական ճակատագիրէն: Հայաստան կը շարունակէր իր մարտիրոսական կեանքը, մինչ անդին՝ Արեւմուտքի մէջ իրերու և ժամանակի բնական բերումովը, Ֆրիշնադարեան օրհասական և ըմբոստեցուցիչ Խաւարին կը յաշորդէր ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆԸ:

Երկնքի այն մասին տակ՝ ուր Հըռոմը կը շահապետէր, «Իտալիոյ գիւտը» կ'ըլլար սկզբնաւորումը իմացական այդ մեծ Մեսիային: «Իտալիա հնութեան վրայ յենած՝ վստահութիւն կը շինէր մարդկային բնութեան վրայ, վոտահութիւն՝ բանականութեան վրայ. մեկուսացներով հրամանակարգութեան բռնադատութիւնը, ճգնողական մարդոտութիւնը, ան ամէն կերպով կը փորձարկէր մտքի ոյժերը. Գոլոմպոսի դիւտով բանականութեան՝ աստուածաբանութեան վրայ տարած առաջին և ուշագորաւ յաղթութիւնն ու մը ուժեղացած՝ ան կ'ազատագրէր գիտութիւններն ու իմաստասիրութիւնը, և ամէն տեսակ յանդուգն ձեռնարկներով՝ ազատօրէն և իւրովի կը փորձէր զանոնք կազմակերպել իրենց բովանդակ անկախութեան մէջ (G. Lanson, Hist. de la litter. française, էջ 219-220): Հոն ամբողջ դասական հնութիւնը նոր կեանքով մը կը վերածնէր: Սոկրատ, Պլատոն, Արիստոտէլ և Հոմերոս իրենց բոլոր պարերով դաշերու փոշիներուն մէջէն կը յառնէին, նո՛ր, Իտալիոյ հողին վրայ, Ելլադայի զուարթ քնարով ներ-

շնչելու համար Վիրգիլիոս մը և ստեղծելու համար տեսանողը «Աստուածային կատակերգութեան» հեղինակին մէջ: Հին Հելլէնը, այսպէս, Ագրիականի շահապետ՝ երկարաձիգ թերակղզիին մէջ կը նորոգուէր ու կը վերածնէր:

Ի՞նչ բաժին ունեցաւ Հայը պատմական այս նշանակալից շարժումին մէջ. ամենաթանկագին բաժին մը՝ Տպագրութիւնը, Վերածնութեան այդ մեծ ռահվիրան: Հայը հակառակ իր քաղաքական ամենավատթար դրութեան և ջլատիչ տաղնապներուն՝ եթէ ոչ իր հողին վրայ՝ այլ գէթ դուքսերու շքնաղագեղ Կղզիին մէջ տեսաւ նորոգուիլը իր փոշեմաշ հնութիւններուն: Եւ Ս. Ղազարը՝ մեծ Սեբաստացիին շունչով ծնաւ ԺԶրդ և ԺԹրդ դարերը, հայ դասականութեան մխիթարական վերազարթումովը: Նորագուած կամ վերածնած Մեսիայեան Դարը, սակայն, բաւական չէր զոհացնելու հայի. նոր դարու ոգին, որ ի վերջոյ մարմնացաւ ԺԹրդ դարու հայի. լեզուական վերածնութեան մէջ (=Աշխարհաբարը): Այս դարուն գրեթէ վերջին քառորդին կը պարտինք նաև քննադատութեան ոգին՝ որ ինքնագիտակցութեան զարթումն ու զարգացումը, հետեւաբար և ճշմարտութեան գիւտն է: Ի՞րդ դարը, իր իննեակ տարիներովը, ԺԹրդին հաւաքադար զաւակն է, այն առաւելութեամբ սակայն որ վերջերս ազատագրուած Բանով (raison) և Խօսքով մ'ալ օժտեց դարերու գերութեան շղթաներով կաշկանդուած մարդը: Հսկայաբայլ և լրջագնաց յառաջդիմութիւն մը բնական պահանջքը պի-

սի ըլլայ այդ նոր մարդուն՝ գարմա-
ներու համար դարերու անշափելի կո-
րուստ մը: Արեւելքի խաւար երկրներն
տակ, ուսկից երբեմն Լոյսը անդրա-
դարձած էր արեւմուտքին՝ հոն ծաւա-
լելու և զօրանալու համար, լուսաւո-
րութեան զործը՝ այն օրէն ի վեր
երբ բազմազան բարբարոս արշաւող-
ներու խառնարան մը եղաւ ան, շատ
դանդաղ յառաջացած է մինչեւ Օսմ.
զինուորական ֆեղափոխութիւնը, ու-
րուն կոշումը պիտի ըլլար պատրաս-
տել Օսմ. համազգային վերածնու-
թիւնը: Պիտի յաջողե՞, այդ ապագան
գիտէ: Միայն կրնանք ըսել թէ այդ
վերածնութիւնը բացարձակապէս կա-
խումքն է ընդհանուր ՆՈՐՈԳՈՒԹԻՒ-
նէ մը՝ երկրին ամէն կերպ կազմակեր-
պութիւններուն և տահմանադրու-
թիւններուն մէջ, բայց մանաւանդ, ու
նախ և առաջ ժողովուրդներու ՆԿԱ-
ՐԱԳԻՐԻՆ մէջ: Երեւոյթի փոփոխու-
թիւն մը եւ ևնոյն իսկ նոր Օրէնք մը,
որքան ալ իմաստուն եւ տաքստա-
նական ըլլայ, չկրնար հաշտել հին
նկարագիրին հետ՝ որ միշտ պիտի ըն-
քոստանայ, միշտ պիտի դառնայ, միշտ
մոռոր պիտի սիրէ: Ինչ որ հին է՝ մութ
է, ինչ որ մութ է՝ չար է, ո՛չ ըստ ինք-
եան, այլ այն առարկային կամ այն
գործին մէջ որմէ անշատուած է դա-
րերու անմըպետով մը: Լոյսի ելեկտրա-
ցում մը անհրաժեշտ է կարենալ ու-
ժաւորելու համար հինը նոր զօրութիւ-
նով մը և պատշաճեցնելու զանի ամէն
ժամանակի:

Տրուեցա՞ւ կամ պիտի սրուե՞ տահ-
մանադրական Օսմանիայի նորոգելի այդ
ելեկտրացումին համայնածաւալ մէկ
հոսանքը, դժուար է առ այժմ պա-
տասխանել, ո՞րքան ալ երեւոյթները
պերճախօս ըլլան:

Մենք մեր աչքին առջեւ ունինք
մասնաւորապէս Հայ ժողովուրդը:

Պատմութիւնը մեզ ցոյց կուտայ
թէ Հայուն նկարագիրը, ինչպէս ազ-
գերու մեծամասնութեանը, բազմա-
խառն բարդութիւն մ'է: Բնիկ թէ
եկ այն երկրին, որ իր անունը կը կրէ
մինչեւ այսօր՝ իր պատմական անց-
եալին իբրեւ խանձարուր և վկայ, ու
նոր երակներուն մէջ ներարկուած է
արիւնը ամենաբարբարոս ցեղերու:
Բաբելոնացիին (?) և հին Արարատցիին
(Խոր. Ա. Ժ.), Սկիւթացիին (Ասքա-
նազ) ու Կիմմերեանը (Գամիլը), Քե-
տացիին ու Խալտեանը, Թորգոմն ու
Արմէնը, և յետագոյն թուականներու
մէջ Պարսիկն ու Ասորին, Արաբն ու
Լատինը, ևն. ևն. առաւել կամ նը-
ւազ չափով բաժին մ'ունեցան հայ-
կական տիրաւոր կազմութեան մէջ:
Երկրին աշխարհագրական դիրքն ալ
ոչ նուազ դիւրացուց այդ տարօրի-
նակ խառնուրդի պատրաստութիւնը:
Մենք չենք ուզեր քննադատել բնու-
թեան գործը և ո՛չ ալ արհամարհել
այն տարրերը, որոնք որչափ ալ հա-
կառականաբար ու բարբարոս՝ կրցած
են կամ հարկադրուած ժամանակի
ընթացքին մէջ միանալ և ուրոյն զան-
գուած մը կազմել: Բարբարոսութիւնը
դատապարտելի է՝ երբ անամենական
անտաշ ու բիրտ նկարագիրի մը մէջ
բոյն է դրած, և ոչ թէ՛ երբ կը խոր-
հրդանշէ անմշակ մտայնութիւն մը՝
որ ունի իր մէջ քաղաքակրթութեւն ըն-
դունակ և տրամադիր կենսունակ ու-
ժեր: Ամէն պարագայի մէջ տակայն
հազուադէպ է որ խառնուրդ մը վա-
տասերումէ զերծ մնացած ըլլայ, երբ
մանաւանդ բնութիւնը ազդեալի կը

գործէ առանց գիտութեան և մարդկային մշակութեան գործակցութեան։ Անտրամարան ազգասէրի խարկանքով չզայրանանք և ինքնապաշտան անտարբերութեամբ մը չհեգնենք՝ երբ կը համարձակինք յայտարարելու թէ Հայ ազգն ալ վատասերումի նշաններ ցոյց կուտայ իր մէջ։ Եւ ասի շատ բնական է, քանի որ պատմականօրէն փաստուած ճշմարտութիւն է թէ, կլիմայէն և միջավայրէն զատ, ճնշումն ու բռնութիւնը զանազան մշտութիւններու կը մղեն պզտիկ ժողովուրդները։ Խորամանկութիւնը, խարդախութիւնը, անբարոյացուցիչ շնթութումներ, անկարգ ապահովեան ոգին ևլն. ևլն. բոլորն ալ ծնունդ վախի և կասկածի՝ ստրուկ ժողովուրդները յատկանշող հակամիտութիւններ են։ «Փառայելու վարժ», կամ դատապարտուած ժողովուրդը սը, որպիսին էր դժբախտաբար Հայը մինչեւ ազատագրումի նոր դարաշրջանը— ի բաց առեալ այն արդարօրէն ըմբոստացած ոգիին՝ զոր մարմնացուցած էին զանազան սկզբունքներու վրայ հիմնուած կարգ մը ընկերակցութիւններ, կրնա՞ր զերծ մնալ այդ ստղտանքէն։

Բայց Հայը ունի նաև ազնուանալու բնական յարմարութիւն մը, և ա՛յդ է թերեւս հիմը իր խառնուրդին, իսկապէս Հայկական տարրին։ Այդ ազնուացումը, կամ այդ ընտրողութիւնը յանկարծական կերպով չի կատարուիր։ Նկարագրի բիւրիղացումը ամէնադժուարին գործ է։ Դարեր միայն կրնան իրագործել զայն։ Ինքզինքնիս խաբած չենք ըլլար երբ ըսենք թէ այդ դարերը սկսած են արդէն Հայուն համար։ Գրի Գիւնի դարը սկզբնաւորումն էր այդ հսկայ գործին, Տպագրութիւնը՝ իբրեւ ելեկարական ոյժը մտայնութեան ծաւալումին, անոր ամէնաէական սատարը և նոր Գրականութեան մշակումին փոյթն ու

եռանդը անոր յարատեւութեան և իրագործութեան երաշխաւորութիւնը։

Այսօր ամէնէն աւերի ոյժ կը տրուի իմացական մշակութեան, լուսաւորութեան սա դարուն մէջ, ուր Գիտութիւնն ու Արուեստը ձեռք ձեռքի տուած՝ նո՛ր հորիզոններ, նո՛ր տեսլականներ կը պարզեն մարդկութեան առջեւ, նոր վերածնութիւն մը պատրաստելու բարձր կոչումովը սրբազնացած։ Բայց ո՛վ չգիտեր թէ չափազանց լոյսը վտանգաւոր է այն աչքերուն՝ որոնք վիրաբուժական գործողութենէ մը վերջ միայն՝ ազատած խաւարի կեղեանքներէն՝ կը բացուին արևոտ կեանքին։ Ի զուր չէր որ Պօղոս Դամասկոսի ճամբուն ճշմարտութեան յայտնութեան «փայլատակող լոյսը» առանց աչքի շլացումի չլրցաւ գիտել։ Եւ ո՛վ գիտէ թէ բարոյական լոյսի գիւտը ֆիզիքական լոյսի մասնակի մէկ կորուստովը չկատարուեցաւ «ընտրութեան անօթ»ին մէջ։ Երկար ատեն իմացական խաւարի մը մէջ ապրող մտքերը աւսիճանաբար միայն կրնան տիրանալ այն լոյսին՝ որ նորոգուած կեանքը պիտի պատրաստէ անոնց մէջ։ Հակառակ պարագային Լոյսը փոխանակ կեանքի՝ մահ պիտի պատճառէ։

Միւս կողմէ սակայն անհնար է խափանել Լոյսը մարդկային այն բոլոր ստորին միջոցներով՝ որոնք ընդհանուր առումով մտքի կուրուքիւն կը կոչուին։ Նախապաշարումները ասոնց կարգէն են։ Մենք յաջողով պիտի խօսինք, եթէ Տէրը կամենայ, թէ ինչ է արդի վերածնութիւնը և թէ ինչ չափով և ուղղութեամբ կը մասնակցի անոր Հայ Եկեղեցին և Հայ ժողովուրդը։

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ԵԿԵՂԵՑԱ-ԻՐԱԻԱԳԻՏԱԿԱՆ

ՍՍՀՄԱՆՔ ԵՒ ԿԱՆՈՂՔ Ս. ՍՈՒՔԵԼՈՑՆԵ
(ի ձեռն կղեմայ, առաքնալ հեթանոսաց)

(Շար. Յոդ թխեն)

ԺԵ. — Եթէ ոք երէց կամ սարկաւազ կամ ո՛վ ոք եւ իցէ ի ժառանգաւորաց ի բաց ընկեցիալ զիւր իշխանութիւնն ⁽¹⁾ երգիցէ յայլ, եւ ամենեւին փոփոխեալ (տեղի ի տեղւոյն) չըջիցի յայլում իշխանութեան ⁽²⁾ առանց կամաց եպիսկոպոսին իւրոյ՝ այնպիսեօք հրամայեմք ոչ եւս քահանայքնալ (λειτουργεϊν) մանաւանդ եւ թէ յիւրմէ եպիսկոպոսէն յորդորեալ ի դարձ՝ ո՛չ լուաւ, այլ յամառեալ եկաց յանկարգութեանն, իբրեւ զաշխարհական ոք հալորդեսցի անդէն:

ԺԶ. — Որ ընդ երկուս ամուսնութիւնս իստորակեցաւ յետ մկրտութեանն կամ ոտացաւ հարձ (παλλαχῃ) ոչ կարէ լինիլ եպիսկոպոս կամ երէց կամ բնաւ իսկ ի քահանայական կարգէ:

(16). — (*) Ապա թէ եպիսկոպոսն՝ առ որում են այսպիսիք՝ առ ոչինչ համարեալ զի վերայ նոցա սահմանեալ զատարկութիւնն (ἀγρία) ընկալցի զնոսին իբրեւ ժառանգաւորս, ի բաց որոշեսցի իբրեւ վարդապետ անկարգութեան:

ԺԸ. — Որոյ զայրի առեալ է կին կամ զհանեալ՝ կամ զբող կամ զգուսան, ո՛չ կարէ եպիսկոպոս լինել, կամ երէց կամ սարկաւազ կամ բնաւ իսկ ի քահանայական կարգէ: ⁽²⁾

ԺԹ. — Որոյ երկուս քորս առեալ է,

(1) Սոյն կանոնին իշխանութեան — վիճակ (παροία) բառին տեղ քարգմանիչը պանդրիստութեան գործածած է երկիցս, բառին բուն նշանակութիւնը դնելով եւ ոչ եկեղեցական առումը:

(*) Հայ ձեռագիրներու մէջ՝ ԺԵ կանոնի վերջին մասը կը կազմէ այս կանոնը:

(2) Բողոք. Ղեւս. ԻԱ, 14, ուր նոյնը կը պատկերուի Հրէից բանամաններուն համար:

կամ զգուսար եղբօր (կամ զքեռորդի) ոչ կարէ ժառանգաւոր լինիլ: ⁽¹⁾

Ի. — Ժառանգաւոր երաշխաւորութիւնս տուեալ՝ լուծցի: (Հմմտ. Կանոն Է):

ԻԱ. — Ներքինի եթէ ի բռնութեանէ մարդկան եղեւ, կամ ի հալածանս կտրեցան արանքն ? (τὰ ἀνδρῶν) կամ այնպիսի ծնաւ՝ եւ է արժանի եպիսկոպոսութեան, եղիցի:

ԻԲ. — Որ կրճատեաց զինքն մի՝ եղիցի ժառանգաւոր, քանզի սպանող ինքեան է եւ արարածոցն (δουλοῦργία) Աստուծոյ թշնամի:

ԻԳ. — Եթէ ոք ժառանգաւոր զինքն կրճատեաց՝ որոշեսցի զերիս ամս, քանզի զբժող (դաւաճանող) է կենաց իւրոց:

ԻԴ. — Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւազ ի շնութեան կամ ի ստերգման եւ կամ ի գողութեան ըմբռնեալ՝ լուծցի՝, այլ ո՛չ որոշեսցի. քանզի ասէ գիրք. «ո՛չ առցէ Տէր վրէժս երկիցս ի միապին»: ⁽²⁾

(26). — Նմանապէս եւ այլք ի ժառանգաւորաց ի նմին պայմանի կայցեն: (*)

ԻԶ. — Որք ի ժառանգաւորութիւն անցանեմն՝ չեւ ամուսնացեալք, զբաւարդացից եւ սաղմոսերգուաց միայն հրամայեմք ամուսնանալ եթէ կամիցին:

ԻԷ. — Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւազ՝ որ հարկանէ զհաւատացեալս մեղուցեալս կամ զանհաւատս անիրաւողս՝ ի ձեռն այսոցիկ երկեցուցանել զնոսա կամ մեղով, հրամայեցաք լուծանել, քանզի ոչ ուրեք զայս ուսոյց մեզ Տէր. ընդհակա-

(1) Բողոք. Ղեւս. ԺԸ, 16.—Ի, 21:

(2) «Ոչ խնդրեսցի կրկին գնոյն վրէժանդութիւն». (Նաւուա, Ա, 9):

(*) Նախորդին իբրեւ մասն դրուած է մեր կանոնագիրներու մէջ:

ռակն՝ ինքն հարաւ այլ ոչ զոք եհար թրչ-
նամանեցաւ, և ոչ զոք փոխարէն թշնա-
մանեաց, չարչարեցաւ և ո՛չ սպառնացաւ:

ԻԸ. — Եպիսկոպոս կամ երէց կամ սար-
կաւագ լուծեալ իրաւաբար ի պատճառս
երեւելի (յայտնի) յանցանայն՝ եթէ համար-
ձակեսցի մերձեալ յաւանդեալն երբեմն
նմա պաշտօն, ամենեւին ի բաց հատեալ
ընկեսցի յեկեղեցւոյն:

ԻԹ. — Եթէ ոք եպիսկոպոս ի ձեռն ըն-
չից՝ այսմ պատուոյ հասանել կարաց, կամ
երէց կամ սարկաւագ, լուծցի ինքն և որ
ձիւնադրեացն զնա, և ի բաց հասցի ամե-
նեւին ի հաղորդութենէ, որպէս Սիմոն
Մոզն յիսկն Պետրոսէ⁽¹⁾ (ἀπὸ ἑμοῦ Πέτρος):

Լ. — Եթէ ոք եպիսկոպոս աշխարհական
իշխանօք վարեցեալ՝ ի ձեռն նոցա բռն
ի վերայ եկեղեցւոյն եղիցի, լուծցի և ո-
րոշեցի, և ամենայն որք հաղորդին ընդ
նմա:

ԼԱ. — Եթէ երէց ոք արհամարհեալ զե-
պիսկոպոս իւր՝ առանձինն ժողով արասցէ
և սեղան կանգնեացէ, ոչ իւրք սզսեալ*
զեպիսկոպոսն ի մասին բարեպաշտու-
թեան, լուծցի՝ իբրեւ զսիրող իշխանու-
թեան, զի բռնաւոր է. նման նմին և ա՛յլ
ժառանգաւորք և որք հաւանեցանն նմա.
Իսկ ժողովրդականքն որոշեցին, և այս ա-
մենայն յետ միանգամ և երկեցս և երիցս
աղայանաց եպիսկոպոսին եղիցի:

ԼԲ. — Եթէ ոք երէց կամ սարկաւագ
յեպիսկոպոսէ իւրմէ եղեւ որոշեալ՝ չէ
արժան յայլմէ ընդունելի լինել, այլ
յա՛նմանէ որ որոշեալն զնա:

ԼԳ. — Մի՛ զոք յօտար եպիսկոպոսաց
կամ երիցանց կամ սարկաւագաց առանց
ընծայական թղթոց ընդունել. կամ եթէ
ունիցին (թուղթս)՝ սակայն քննեցին,
եթէ իցե՛ն քարողք բարեպաշտութեան, և
ապա ընկալցին. իսկ եթէ ոչ՝ զպէտս նո-
ցա տացեն՝ ոչ ընկալեալ զնոսին ի հաղոր-
դութիւն. վասն զի բազում ինչ լինի խա-
բէութեամբ:

ԼԴ. — Եպիսկոպոսաց իւրաքանչիւր ազ-
գի գիտել պարտ է զիւրեանց առաջինն
(τὸν ἐν αὐτοῖς πρῶτον) և համարիլ զնա
իբրեւ գլխաւոր, և մի՛ ինչ աւելորդ առ-
նել առանց կամաց նորա. բայց միայն իւ-
րաքանչիւր ումեք գործել ո՛րչափ իւրում
իշխանութեանն անկէ և որոց ընդ նովաւ
գաւառք (χῶρα) ⁽¹⁾. այլ և ո՛չ նմա
արժան է առնել ինչ առանց ամենեցուն
կամաց. զի այսպէս միարանութիւն եղիցի
եւ փառաւորեսցի Աստուած ի ձեռն Տեսուն
ի Հոգի սուրբ:

ԼԵ. — Եպիսկոպոս ոք մի՛ իշխեսցէ
ձեռնադրութիւնս առնել արտաքոյ սահ-
մանաց իւրոց ի քաղաքս կամ ի գաւառս՝
որ ոչ ընդ ձեռամբ նորա են. ապա եթէ
յանդիմանեսցի զայն արարեալ առանց կա-
մացն այնոցիկ՝ որ ունին զքաղաքս կամ
զաւելիս, լուծցի ինքն և որք ձեռնադրե-
ցանն:

ԼԶ. — Եթէ եպիսկոպոս ոք ձեռնադրու-
եալ ոչ ընկալաւ զպաշտօն կամ զհոգս
ժողովրդեանն ընդձեռնոյ նմա, սրոշ-
եալ կացցէ մինչեւ հաճեսցի. նոյնպէս երէց
կամ սարկաւագ. ապա եթէ երթեալ՝ ոչ
ընկալեալ եղեւ, և և այս ո՛չ յիւրոցն կա-
մաց այլ ի ժողովուրդեանն խառապտու-
թենէ՝ ինքն կացցէ եպիսկոպոս, և ժա-
ռանգաւորք քաղաքին որոշեցին, զի ան-
հնազանդ ժողովուրդեանն խրատիչ ոչ եղին:

ԼԷ. — Երկիցս ի տարւոջ ժողով լիցի
եպիսկոպոսաց, և քննեսցին առ միմեանս
զհրամանս (δόγματα) բարեպաշտութեան,
և զպատահեալ եկեղեցական ընդդիմաբա-
նութիւնս լուծցին. միանգամ ի չորրոր-
դում չարաթու Պենտեկոստէին և երկրորդ
յաշխայնի ⁽²⁾:

ԼԸ. — Զամենայն եկեղեցական իրաց՝ ե-
պիսկոպոսն կալցի հոգ եւ վարեսցէ զնոսս
իբրեւ հայեցող (վերադիտող) Աստուծոյ.
չէ նմա արժան գողանալ ինչ ի նոցունց՝
և և գաստուծոյն չնորհել իւրոցն ազգա-

(1) Թ. ի վիսկն Պետրոսէ որ սխալ գրչութեան
արդիւնք կրնայ ըլլալ:

(*) Զեռացիրք ունին ստուգեալ կամ օգնեալ, որ
յայտնի սխալ է:

[1] Թարգմանիչը՝ տեղիք:

[2] Δεύτερον δὲ ὑπερερεταίου δωδεκάτης =
յերեսասաներորդում աւել իլւերերեքսիսն ամսոյ
[15 հոկտեմբեր]:

կանաց . բայց եթէ աղքատք իցեն՝ օգնել իրբեւ աղքատաց . այլ ո՛չ պատճառանօք նոցա զեկեղեցւոյն օցտել :

ԼԹ .— Երիցունք կամ սարկուսազունք առանց կամաց եպիսկոպոսին մի՛ ինչ կատարեսցեն , զի նմա հաւատացաւ ժողովուրդն Տեառն եւ վստի ոգւոց նոցա համարս պահանջեսցի :

Խ .— Եղիցին յայտնի իրք եպիսկոպոսին՝ եթէ առանձին ինչ ունիցի , եւ իրք եկեղեցւոյն (τὰ κρυπτά) յայտնի . զի ի վախճանելն իւրում իշխանութիւն կայցի եպիսկոպոսն իւրոցն , որո՛ց կամի եւ ո՛րպէս կամի թողուլ , եւ մի՛ պատճառանօք եկեղեցական իրացն՝ վրիպեսցի եպիսկոպոսն յիւրոց անտի . զի թերեւս կին եւ մանկունս ստացեալ ունիցի կամ ազգականս կամ ծառայս . քանզի արդար է այս առ յԱստուծոյ եւ առ ի մարդկանէ՝ ոչ եկեղեցին փնաս ինչ կրեսցէ անգիտութեամբ իրաց եպիսկոպոսին եւ ոչ եպիսկոպոսն կամ ազգականք նորա պատճառանօք եկեղեցւոյն փնասեսցին , եւ կամ զի մի՛ ի նեղ անկանիցին(*) ազգականք նորա՝ եւ մահ եպիսկոպոսին լիցի պատճառք հայհոյութեան :

ԽՍ .— Հրամայեմք եպիսկոպոսի իշխանութիւն ունել եկեղեցական իրաց . քանզի եթէ զպատուական ոգիս մարդկան նմա հաւատարի է , եւս առաւել նմա պէտք են ի վերայ ստացուածոյն կալ , որպէս զի ընդ իշխանութեամբ իւրով ինամ տարցի ամենեցուն , զպէտս կարօտելոցն ի ձեռն իրեցանց եւ սարկաւազաց լցեալ երկիւղիւն Աստուծոյ եւ ամենայն զգուշութեամբ . առնուլ եւ ինքեան իսկ (եթէ կարօտ ինչ իցէ) ի հարկէ պիտոյիցն՝ եւ ի պէտս օտար եղբարց , զի մի՛ իւրք պակասիցէ ինչ նոցա . վստի զի օրէնք Աստուծոյ հրամայեն որք պարապին սեղանոյն ի սեղանոյ անտի կերակրիլ , ըստ որում եւ ո՛չ ոք զինուոր իւրով թոշակօք զինուորիցի :

ԽԲ .— Եպիսկոպոս կամ երեց կամ սարկաւազ քուէից պարապեալ եւ գինեւրութեանց՝ կամ դադարեսցէ կամ լուծցի :

[*] Թարգմանիչը նիւթական քարգմանութեամբ րսած է՝ յիս անկանիցին (εἰς πράγματι ἐμπότειν) որ հայեցի չէ :

ԽԳ .— Կիսասարկաւազ կամ սաղմոսասաց կամ գրակարդաց զնմանս արարեալ՝ կամ դադարեսցէ կամ որոշեսցի , նմանապէս եւ ժողովրդականքն :

ԽԴ .— Եպիսկոպոս կամ երեց կամ սարկաւազ որ պահանջեսցէ վաշխ կամ տոկոսիս՝ ի փոխառուաց՝ կամ դադարեսցէ կալուծցի :

ԽԵ .— Եպիսկոպոս կամ երեց կամ սարկաւազ ընդ աղանդաւորս աղօթակից լեալ միայն՝ որոշեսցի . ապա եթէ հրամայեսցէ նոցա՝ իրբեւ քահանայից՝ առնել ինչ՝ լուծցի :

ԽԶ .— Զեպիսկոպոս կամ զերեց՝ որ ըզհերձուածողացն ընդունի զմկրտութիւն կամ զպատարագ՝ հրամայեմք լուծանել : Զի զինչ միարանութիւն է Քրիստոսի ընդ Բեկիարայ , կամ զի՛նչ մասն հաւատացելոյն ընդ անհաւատի :

ԽԷ .— (*) Եպիսկոպոս կամ երեց եթէ զճըմարիտ մկրտութիւն մկրտեալն վերստին մկրտեսցէ , կամ զպղծեալն յամպարչտաց եթէ ո՛չ մկրտեսցէ՝ լուծցի , որպէս ոք որ ծաղր առնէ զխաչ եւ զմահ Տեառն , եւ ոչ ընտրէ զսուրբ քահանայն ի սուտ քահանայացիլոյն :

ԽԸ .— Եթէ ոք ժողովրդական հանեալ զկին իւր առնիցէ ա՛յլ , կամ զարձակեալն յայլմէ՝ որոշեսցի :

ԽԹ .— (**) Եթէ եպիսկոպոս ոք կամ երեց ըստ հրամանի Տեառն ոչ մկրտեսցէ ի Հայր՝ յՈրդի եւ ի Ս . Հոգին , այլ յերիս անըակիցն էութիւնս (ἑναρχος) կամ յերիս որդիս կամ յերիս Մխիթարիչս , լուծցի :

Ճ .— Եթէ եպիսկոպոս ոք կամ երեց ո՛չ երիս մկրտութիւնս միոյ սրբութեան (անուս = ընծայումն) կատարեսցէ , այլ մի մկրտութիւն՝ տուեալ ի մահն Տեառն , լուծցի . քանզի ոչ ասաց Տէր . ի մահ իմ մկրտեսցէք , այլ՝ Գնացէ՛ք աչակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս , մկրտեցէ՛ք զնոսս յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ : (***)

(*) ՀԹ կանոն , մեր Կանոնագիրքերուն մէջ :

(**) Զ կանոն , մեր Կանոնագիրքերուն մէջ , ուր վերջին տողերը քարգմանուած են «յերիս Հայրս , յերիս Որդիս եւ յերիս Հոգիս» :

(***) ԶԱ կանոն , մեր Կանոնագիրքին մէջ , որ վարդապետական յաւելումով մը հովսեփաւոս է : Նոյնպէս յոյն բնագիրէն դուրս են հայ կանոնագիրքի ԶԲ, ԶԳ, ԶԴ եւ ԶԵ (վերջին) Կանոնները :

ԿՐՕՆԱ-ԸՆԿԵՐԱԿԱՆ

ԱՆՑԵԱԼԵՆ ԴԵՊԻ ԱՊԱԳԱՆ

Ի՞ՆՉ Է ՄԵՐ ՊԱՐՏՔԸ

Անցեալը փառայեղ է, և՛ դիւցազնական, և՛ արիւնքաներկ, անձնուիրական հոյակապ գործերով ու գործիչներով պսակուած:

Նոր տարիի մը սեմին վրայ՝ համառօտ ակնարկ մը դէպ ի ետ, դէպ ի Հայ Եկեղեցիի անցեալ փառքերու և տաճնապնդութեան օրերը, անօգուտ չալիտի ըլլայ, որպէսզի՝ եթէ հնար է՝ ճշտենք այն ուղեգիծը ուրկէ պէտք է քայլենք, հասցնելու համար նոյն ճշմարտապէս սուրբ և առաքելական Եկեղեցին՝ առաջին դարերու իր անուշ պարզութեան, բարձրացնելու համար իր պարտականութեանց կատարումի վեհագոյն սասաններն, դարձնելու համար անոր՝ ժոժողովուրդն իր սփոփարար հովանիին տակ ամփոփելու, պատասպարելու ուժն ու կարողութիւնը, որ տկարացած է, աւա՛ղ, իր պաշտօնեաներուն անձեռնհասութեան և անպարտաճանաչութեան, և — ատորքնական հետեանք — ժողովուրդին ալ Եկեղեցիէն ուժանալուն, կրօնքէն ու անոր սրբավայրերէն հեռո՛ւ, հեռո՛ւ փախչելուն պատճառով:

Սխալ չհասկցունք, Եկեղեցին մի՛ է սուրբ և առաքելական, անյեղլի և անփոփոխ իր յաւիտեական ճշմարտութեանց, հաւատոյ զաւանդութեանց, հիմնական վարդապետութեանց մէջ: Եւ Հայ Եկեղեցին, ամէնէն աւելի հաւատարիմ՝ Քրիստոսի փրկարար սկզբունքներուն, ամէնէն լայնամիտ գաղափարներով տոգորուն, սիրոյ և անձնուիրութեան մարմնացումն եղած է, միշտ ներողամիտ մարդկային անխուսափելի տկարութեամբ սայլաքողներուն՝ երբ կը զղջան, միշտ սէրն ու պաշտպանը և զօրավիգը ժողովուրդի իրաւունքներուն, պահապան հայ ժողովուրդի ինքնուրոյնու-

թեան, որուն էական մէկ պայմանն է ի՛ր — Եկեղեցիին — գոյութիւնը: Ուստի երբ Եկեղեցիին տկարացումին վրայ կը խօսինք կը հասկնանք ոչ թէ իր հիմնական վարդապետութիւններն և սկզբունքները, որ միշտ բարձր են մարդկային մտքի հասողութենէն ու միշտ մարդկութեան բարձրացումն և ազնուացումն ունին իրենց նպատակ, այլ իր պաշտօնէութեան տկարացումը, վերէն մինչև վար, թէև պատուաբեր բացառութիւններով:

Բայց, նախ ակնարկ մը դէպ ի ետ, դէպ ի հին դարերը. ու պիտի ճառագայթէ մեր աչքերուն առջև այն հսկայ և բարերար դերը, զոր Հայաստանեայց Եկեղեցին ունեցեր է ազգին ճակատագրին վրայ: Անհամար մարտիրոսներու և մարտիրոսուհիներու կարմիր արիւնովն հատաւորուած և նուիրագործուած այդ սուրբ, պաշտօնի՝ Եկեղեցին՝ չինական պարիսպներով չբռնապատուած զղեակ մը, փղոսկրէ աշտարակ մը չէ եղած՝ մէկ քանի աւատապիտներու միայն սեփական, ոչ ալ ինքը՝ Եկեղեցին՝ կամ իր պաշտօնեաները ժողովուրդին վրայ նուաճողական ձգտումներ սնուցած են, կամ զայն շահագործելու, իբրեւ ստրուկ կամ գերի իրենց ծառայեցնելու հետամտած: Առաջին օրէն մինչև այսօր, Հայ Եկեղեցին, հաւատարիմ Աւետարանի ռամկավարական սկզբունքներուն, գերազանցօրէն ժողովրդական եղած է, ժողովուրդով ու ժողովուրդի՛ն համար ապրած:

Սկսելով Ս. Լուսաւորչէն, որուն կատարած հոյակապ գործը, ազգերու կեանքին մէջ աննախընթաց, քաղաքակրթական նոր ուղի մը բացաւ հայ ժողովուրդին համար, իր անմիջական յաջորդները՝ մինչև Մեծն Ներսէս, մինչև Ս. Սահակ Պարթև, և աւելի՛ ետքերը մինչև Յովհան Օճնեցի, Սահակ Զորափորեցի, մինչև Շնորհալիները և

անոնց բազմաթիւ յաջորդները, Հայ. Եկեղեցիին Հովուապետներուն և Հովիւներուն կեանքն ու գործերը գրէթէ անընդհատ շարք մ'եղած են անձնագոյնութիւններուն, մերթ պաշտպանելու համար ժողովուրդին իրաւունքը՝ իրեն արեւակից, համազգի վեհապետներուն անիրաւութիւններուն, զեղծումներուն դէմ, մերթ իբրեւ թումբ կանգնելու օտար ոտնձգութիւններուն առջեւ, որ տեղի կ'ունենային Բիւզանդիոնէն կամ Հռոմէն՝ քրիստոնէական համերաշխութեան պատրուակին տակ խըլելու համար Հայուն Եկեղեցիին և ազգի՝ ալ՝ անկախութիւնը, և վերջապէս քանի՞ քանի անգամներ ալ հրահրելու ազգի եւ կրօնքի սիրոյն ոգին, ու տկարացած բազուկները, վնասած սիրտերը զօրացնելու Արեւելքէն կամ Հարաւէն եկած ահաւոր յարձակումներու դէմ, որ իբրեւ համայնաջինջ ուրական մը կ'սպառնային Հայ անունը քնջել իսպառ ազգերուն ցանկէն:

Ո՞ր Հայուն սիրտը չի թրթուար ի յուշ ճշմարտապէս միծ Հայրապետի մը, Ս. Ներսէս Պարթևի կեանքին ու գործերուն. հայրապետի մը որ երբեք Պահուն ամբարանքման համար արքունիքներ կը թափառի, աքսոր և տառապանք յանձն կ'առնէ, միեւնոյն ատեն երկրին ամէն կողմը սփռել ջանալով լոյսի տաճարներ, բարիգործական հոյակապ հաստատութիւններ, ինչ որ այսօր իսկ բաւական պիտի ըլլար ոսկի տառերով արձանագրելու պատմութեան էջերուն մէջ՝ անունը ու և է վեհապետի կամ հովուապետի, որ կարենայ հետեւիլ այդ անստոգրելու օրինակին: Բիշշատ զգացումի տէր Հայու մարմինը փուշ փուշ կ'ըլլայ, կարգաւով Հայ ազգային-եկեղեցական պատմութեան այն էջը, ուր կը պատկերացուի միեւնոյն Մեծ Ներսէսը՝ Նըպատ լեռան վրայ՝ ուր բաղկատարած ազգի միմունջներ կը բարձրացնէ Լուսաւորչի Աստուծոյն, Հայ զէնքերուն յաջողութեան համար, մինչ վարը Զիրաւի դաշտին մէջ Հայ և Պարսիկ ուժերը կը չափուին մէկմէկու հետ: Հոյակապ տեսարան, անուշ յիշատակ, որուն նմաններն իրաւ է թէ հազուադէպ են Հայ, մասնաւոր օտար պատմութեան մէջ:

Մէկ քանի տասնեակ տարիներ ետքը տարբեր տեսարան, ոչ նուազ հիանալի, սրտազրաւ: Հովուապետ մըն է դարձեալ, Նրեսէսին զաւակը, Սահակ Պարթև և Հայրապետ, որ իր անբաժանելի ընկերին՝ Մեսրոպի թանկագին օժանդակութեամբ, և ուսումնասէր վեհապետի մը՝ Վռամշապուհի քաջալերութեամբ և հովանաւորութեամբ, հայ ազգին կ'ընծայէ գիրն ու գրականութիւնը, Հայուն կուտայ կարելիութիւնը՝ իր տաճարներուն մէջ ի՛ր լեզուով աղօթելու ի՛ր Աստուծոյն: Այդ երանելի գոյգը, կրօնքի ջերմ սիրով մը տոգորուն, կը ձեռնարկէ Հայ ժողովուրդն օժտել ոսկեղինիկ թարգմանութեամբը գիրքերու Գիրքին, յաւիտենական ճշմարտութեանց վսեմ հաւաքածոյին: Բայց անոնց միտքը չի սահմանափակուիր միայն Աստուածաշունչին և Եկեղեցիի Ս. Հայրերուն գիրքերուն թարգմանութեանց մէջ: Անոնք — և իրենց աշակերտները — կ'ըլլան միջնորդները քաղաքակրթութեան լոյսին ծաւալմանը՝ ասիական ժողովուրդի մը մէջ, որ էր Հայը, և միանգամ ընդ միշտ կ'ազատեն զայն խաւարի տիրապետութենէն, որ ապագայ դարերու մէջ բաժինը պիտի ըլլար իրեն սահմանակից Արեւելքիներուն: Բաւական է կարգաւ Ս. Մեսրոպի պատմութիւնը՝ Կորինիի կողմէ գրի առնուած, և անկարելի պիտի ըլլայ խորունկ հիացումով չհամակուիլ այդ իրապէս սուրբ մարդուն նկատմամբ, որու կեանքին նըշանաբանն է եղած. — «Սիրել ժողովուրդը, պսրթիլ ժողովուրդի մեջ, դաստիարակել ժողովուրդը, ու հաշտել sqhsութիւնն ու խաւարը, որոնք ժողովուրդին ամենախանգաւոր թշնամիներն են»:

Ս. Սահակի օրինաւոր յաջորդին՝ Յովսէփ կաթողիկոսին օրով՝ նոր հալածանք հայ ազգին ու Եկեղեցիին դէմ՝ Յազկերտի մոգակրօնութեան կողմէ, որուն դիմադրութեան հոգին կը կազմեն միշտ եկեղեցականներ, Ս. Ղեւոնդեանք անուամբ հանրածանօթ, որ իրենց գործօն մասնակցութեամբ Մեծ Պատերազմին, կը պատրաստեն և զլուխ կը հանեն Վարդանանց բարոյական մեծ յաղթութիւնը, Հայու ա-

զատ կրօնքին յաւերժական անկախութիւնը, որ երեսուն տարի ետքը կը պաշտպանուի դա՛րձեալ Մամիկոնեան տունէն քաջարի զօրավարի մը նիւթականէ աւելի բարոյական աննկուն ուժովը, որ իր սընունդն ստացած էր Գիւտ եւ Յովհան Մանգակունի կաթողիկոսներու դաստիարակութեամբն ու քաջալերանքովը:

Տարիներն ու դարերը կը հոլովին, բայց ազգին ու Եկեղեցիին դէմ հալածանքը չի դադարի. ընդհակառակն առաւել եւս կը սաստկանայ, մէկ կողմէ Յոյն կայսրերու կողմէ, — որոնց նպատակն էր Քաղկեդոնի ժողովն ընդունել տալու պատրուակին տակ Հայուն ինքնուրոյն ազգութիւնը ձուլել —, եւ միւս կողմէ Հազարացի Ամիրապետներու կողմէ որ արիւնով ներկեցին ամբողջ Հայաստան աշխարհը՝ մէկ ծայրէն միւսը: Սրտայոյզ է մահուան դրուագը Զորափութեցի Սահակ կաթողիկոսին, որ Դամասկոսի մէջ կալանաւորուած՝ հիւանդագին ու շղթայակապ՝ կ'ուզէ դիմաւորել Աբղլա ամիրապետէն Հայերու իսպառ ջնջման հրամանը գործադրելու գացող զօրապետը, Մոհմատ, եւ սակայն ճամբան կը վախճանի: Երանելի հայրապետն առաջուրնէ աղաչանաց գիր մը գրած ունէր սակայն, զոր յետ մահու իր սառած արիւն մէջ դնել կը կտակէ: Զօրավարը Ս. Հայրապետին վախճանն իմանալով ի՛նքը կուգայ անոր, և անձամբ կ'առնէ ձեռքէն աղաչանաց գիրը: Որքան ալ անգուլթ՝ մարդկային սիրտ մ'ունէր ան վերջապէս. կարեկցութեան անդիմադրելի թափով մը կը փղձկի, ու չի կրնար մերժել Հայոց Հովուապետին հուսկ, յետ մահու աղաչանքը՝ խնայելու իր տառապեալ տաղնապեալ հօտին: Ծշմարտապէս բարի, անձնուէր, սո՛ւրբ հոգիներ, որ մահուան ճգնաժամին մէջ իրենց ժողովուրդն և անոր փրկութիւնը միայն կը մտածեն:

Գրութեանս ամփոփ սահմանը չի ներեր բազմապատկել օրինակները, հաստատելու համար Հայաստանեայց Եկեղեցւոյ վարդապետներուն գերազանց ժողովրդասիրութիւնը, անոնց միութիւնը ժողովուրդին հետ, անոնց մասնակցութիւնը ժողո-

վուրդի վիշտերուն և ուրախութեանց, անոնց անձնաւոր հոգածութիւնը ժողովուրդին իմացական, բարոյական և նիւթական զարգացումին համար: Բայց կարելի է անվախ ըսել թէ բացարձակ խեղաթիւրում մ'է պատմութեան, հայհոյանք մ'է ուղիղ բանին դէմ՝ պնդել թէ Հայ Եկեղեցին իր ոգւովն ու կազմակերպութեամբ լիապէս կար դեր մ'ունեցած է Հայ ազգին ինքնուրոյնութեան գործին մէջ, և Հայ հոգեւորականութիւնը՝ ընդհանուր առմամբ՝ զրոգնուած չէ իր պարտականութեան բարձրութեան վրայ: Այսպիսի շնական յայտարարութեան մը դէմ կը բողոքին ոգիներն հին ու նոր դարերու բոլոր ազգանուէր հովիւներուն և հովուապետներուն. զայրոյթի, արտմութեան աղաղակներ կ'արձակեն Շնորհալիներն ու Որոտեցիները, Աշտարակեցիներն և՛ Վարժապետեանները և՛ Սրբանձառեանները և՛ Խրիմեանները, և՛ քաջարի հոյր ան բոլոր հին ու նոր նահատակներուն, — կաթողիկոս, վարդապետ, քահանայ թէ աշխարհական — որ զոհուեցան կրօնքի և ազգի սիրոյն:

Ինչո՞ւ սակայն այս ամիսի ակնարկը դէպ ի ետ, եթէ ոչ ցոլացնելու համար այն ոգին որով ներշնչուած են եղբի Հայ Եկեղեցիի այդ անձնուէր պաշտօնեանները, որմէ այսօր ընդհանրապէս զուրկ կը գրտնուինք մենք այսօրուան անարժան պաշտօնեաններս այդ սրբազնասուրբ տաճարին. ցոլցնելու այն չիտակ ճամբան ուրկէ քալել են անոնք, և ուրկէ բոլորովին չեղած ենք մենք՝ մեր աչքերը վարագործուած ըլլալով աշխարհային հոգերու — և կիրքերո՛ւ — ամենաթմանձր քօղովը:

Անոնք՝ հակառակ ամէնէն աննպաստ և դժնդակ պայմաններու՝ գիտցել են հաւասար ուժով պայքարել հասարակաց թշնամիին դէմ: Հազարացի ոստիկաններու, Պարսիկ արքունիքի բիրտ ուժին դէմ կրրցել են ոտքի հանել ըմբոսացումը ամբողջ ժողովուրդին, որ իրեն ներշնչուած աննկուն կորովով յաճախ յաղթական ելեր է մղած անհուսաար պայքարէն, և պարտութեան պարագային արիւթիւնն ունեցել է մեռնիլ գիտնալով: Յոյն և լատին ո-

անձողութիւններու դէմ անոնք — հայ քա-
ջարի և իմաստուն հովուապետները — կա-
րողացեր են ըմբերանել հակառակորդ տար-
րերը՝ նոյն պէնքերով, սուրի՝ դէմ սուր,
գաղափարի դէմ գաղափար։ Աղանդաւոր-
ներու ոսկեզօծ իմաստակութիւնները գիտ-
ցեր են ոչնչացնել ճշմարիտ գիտութեամբը
աստուածային կրօնքին։ Անոնք չըջանայե-
ցութիւնն ունեցեր են ճանչնալու ոգին
այն ժամանակին յորում կ'ապրէին, և
թշնամիին զեմիտը զինուէր։ Անոնք հա-
ւատքով կը մտնէին Աստուծոյ տաճարին
սեմէն ներս, և գիտէին իրենց դրամը, ի-
րենց հանգստութիւնը, իրենց բոլոր կա-
րողութիւնները, ի հարկին իրենց կեանքը
նուիրել հանրային օգտին։ Անոնք, վեր-
ջապէս, մինա՛կ հոգեւոր չէին փնտեր,
կրօնքը միջոց մըն էր իրենց ժողովուրդին
միտքին լուսաւորութեանը, ու կը դաս-
տիարակէին զայն՝ իրենց տրամադրութեան
սակ զանուած միջոցներով։ Վանքերը՝
հոգեւոր և աշխարհային գիտութեանց կեդ-
րոններ եղած են հին ժամանակներու մէջ,
կամ գոնէ ձգտած են ըլլալ՝ ի՛նչ չափով
որ կարելի էր այն արիւնտ ժամանակնե-
րուն մէջ։

Մենք, մենք ի՛նչ կ'ընենք հիմա։

Հակադրութիւնը սոսկալի է։ Անճա-
սիրութիւնը, չանամուլութիւնը, պաշտօ-
նին սուրբ պարտականութեանց դէմ բա-
ցարձակ, անխի՛ղճ անտարբերութիւնն այն-
քան տարածուած է դժբախտաբար մեր մէջ,
որ հակառակ վարմունք ունեցողները բա-
ցառութիւնների սկսած են դառնալ։ Տգի-
սութիւնը՝ հոգեւորականութեան — մաս-
ւորապէս քահանայութեան — մէջ սովո-
րական եղած է, և արժանապատուութեան
զգացումը կը նուազի՛, կը բացակայի դը-
րամի սիրոյն առջև։ Եպիսկոպոսներ ու-
նինք սրունց գործը միայն միտելաթաղու-
թիւնն ըլլար կարծես՝ շողջողուն դամբա-
նականներով, զաւառական առաջնորդ-
ներ ունեցած ենք և գուցէ ունինք ցայսօր՝
վարժարանի, հայ սուրեն դաստիարակու-
թեան թշնամի կամ գոնէ անտարբեր և
միւս կողմէ ժողովուրդին արիւնը քամող
ջուրիւ պաշտպան և կուսակից, վարդա-

պետներ ունինք պաշտօնախոյս և «Վստի-
րի գեղածիծաղ ափունքին» սիրահար, և
քահանաներ՝ որոնց միակ մտահոգութիւնն
է ծուխ շատցնել, մկրտել, պսակել, թա-
ղել...։ Խօսքը չենք ըներ այն սակաւա-
թիւ վատերուն, որ իրենց մատնութիւննե-
րով կամ լալիչ, հրապարականախատ բա-
րոյականով ամօթի մուրը քսած են ընդ-
հանուր եկեղեցականութեան ճակտին։

Չարմանալի չէ ուրեմն երբ Եկեղեցին
կը տկարանայ։ Բանակ մը կրնա՞յ զօրաւոր
ըլլալ, երբ զօրապետներն ու զինուորները
անտարբերներ, թուլեր, վատեր, դասա-
լիքներ ըլլան մեծ մասամբ։ Չարմանալի
չէ՛ երբ ժողովուրդն հեռու կը փախչի ե-
կեղեցիէն ու եկեղեցականէն. ի՛նչպէս կըր-
նայ սիրել զանոնք, երբ վարժարանին մէջ
բա՛ն մը չեն ըսեր իրեն ատունց վրայ, չեն
սորվեցուցեր սիրել Հայուն Աստուծոյ,
Հայուն կրօնքը, Հայուն հոգեւորականը,
և երբ հոգեւորականութիւնն ալ վարժա-
րանին մէջ կամ գուրաւ այդ սէրն արծար-
ծելու փոյթ չէ տարեր։ Եւ ժողովուրդին
ու հոգեւորականին հաւատար անտարբե-
րութենէն ետքը, զարմանալի չէ ընաւ երբ
եւրոպական դարգացումի կեղեւանքով
ոսկեզօծուած ծանծաղամիտ — և գուցէ չա-
հախճիր — հոգիներ պայքար կը բանան
կրօնքին ալ, կրօնականութեան ալ դէմ,
առաջինը նկատելով անպէտ, սկարացած,
մեռած հաստատութիւն մը, և երկրորդը
անուանելով «հոգեւոր կոյրեր, խաւար
հոգիներ»։ Տակաւին առջի օր հայ թեր-
թի մը կողմէ հայ հոգեւորականութիւնը կը
նկատուէր «Ճիգուլիթական կաղմակերպու-
թիւն», «Իգնատիոս Լոյոլայի հետեւող-
ներ»։ (!!!)

Եւ մենք, անտարբեր, կը լռենք մեր
երեսին նետուած այս անարգանքին դէմ։

Անշուշտ վսեմ մեծանճութիւն մ'է
թշնամանքին պատասխանել արհամարհոտ
լռութեամբ մը. բայց աւելի վսեմ մեծանճ-
նութիւն մը պիտի ըլլար օգտուիլ այդ թըշ-
նամանքէն՝ եթէ իրաւունքի հիւլէ մը իսկ
կայ անոր մէջ, և ուղղել ինքզինք-
նիս։ Անշուշտ Եկեղեցին ժայռ մ'է ամուր,
որուն ընդհարող ալիքները կը փլուզին.

բայց ալիքներն եթէ ընդհարին չարունակ, կրնան մաշեցնել ժայռը և գուցէ հիմէն խախտուի:

Եւ պէտք չէ անտեսել որ անտարբերութեան, թերահաւատութեան, կասկածանքի չըջաններէն ետքը, կրօնքի յաւիտենական ճշմարտութեանց և Աստուծոյ մը իսկ գոյութեան մասին անհաւատութեան ուժգին ալիքներ են որ կ'ընդհարին այժմ այն կրանիտեայ ժայռին որ հայ Եկեղեցին կը կազմէ: Անհաւատութեան ալիքներ չառ եկած և փշուր փշուր ընկրկած են Եկեղեցիին անընկճելի տոկունութեան առջեւ: Այս անգամուանը սակայն սովորականէն աւելի մեծ վտանգ մէջ, վասն զի գիտութեան (?) անունով կը խօսի թերուս, դիւրահաւան ժողովուրդի մը, ազատութեան անունով կը ճառատէ բրնձնութեան շղթայով կապկպուելէ հազիւ ազատուած ազգի մը. վասն զի այդ անհաւատութեան քարոզիչները իրենց ազատամտութեան(?) դէմ Եկեղեցին հոմանիշ կը ցուցնեն խաւարի և բռնակալութեան, իբրեւ ապացոյց մէջտեղ դնելով Եկեղեցա-

կաններէ ոմանց զեղծումներն և չարաչափութիւնները, խաւարամտութիւնն և յետադիմական ոգին, զոր կը ճգնին ընդհանրացնել ամբողջ Եկեղեցականութեան վրայ:

Այս ոսկեզօծուած թոյները կը տարածուին ժողովուրդին զանազան խաւերուն մէջ՝ սպառնալով թունաւորել ազգին կենսունակութեան աւիւնը: Եկեղեցականութիւնը պարտականութիւնն ունի գիտակից և լուրջ ուղղութեամբ մը չէղութեան, ճշմարիտ ազատութեան, քրիստոնէական կրօնքի վսեմ սկզբունքները ծաւալելու կեանքի խօսքերու ծարաւի ժողովուրդին մէջ:

Հայ Եկեղեցականութիւնն ի վիճակի՞ է այս նուիրական պաշտօնը կատարելու, և ինչ ուղղութեամբ ու ծրագրով պէտք է գործէ: Հարցը ուշագրաւ է, և կ'արժէ որ մասնաւոր զրուցեան մը նիւթ ընենք յառաջիկայ թուով:

ԶԱՐԲՄԱՅՐ ԴԱՀԱՆԱՅ

Պեփրաւ

ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ՊԱՀԵՑՈՒՄԻԹԵԱՆ ՀԱՐՑԸ.—ՀԻՆՔ ԵՒ ՆՈՐԸ.—
[Բsp.թ. 14-17.—Մրկ. Բ. 18-22.—Ղուկ. Ե, 33-39]

Այս հատուածը երեք խմբագիր աւետարաններու մէջ ալ միեւնոյն ոճով և միեւնոյն մանրամասնութեամբ կը պատմուի. միայն Ղուկասի 39 համարը (Բղդ. Սիրաքթ, 14-15) կը պակսի միւս երկուքին մէջ: Հատուածիս նիւթ եղով պահեցողութեան հարցը մաքսաւոր Մաթէոսի (= Ղևի) կոչունքին հետ կապ ունի և անկէ ծնունդ առած է: Ըստ Մաթէոսի հարցը մէջտեղ դնողները Յովհաննէսի աշակերտներն են, իսկ ըստ Մարկոսի և Ղուկասի փարսեցիներն ու դափրներն են, որոնք Յիսուսի և անոր աշակերտներուն անխտիր մաքսաւորներուն հետ ճաշելը տեսնելով կը գայթակղէին:

Հարցումը երեք աւետարաններու մէջ ալ թէեւ նոյն ձեով՝ այլ բառի նուրբ տարբերութեամբ մը յառաջ կը բերուի: Փոխանակ «քո աշակերտքդ ոչ պահեն»ի, զոր հաւատարապէս կը գործածեն Մաթ. և Մրկ., Ղուկաս ունի «քոյքդ ուսեմ եւ ընկեմ»: Յիսուսի պատասխանն ալ միեւնոյն հանգամանքն ունի: Մաթէոս, փոխանակ «մարթ ինչ իցէ... պահել»ի (νῆστεύειν = ծով պահել), զոր ունին Մրկ. և Ղուկ., կ'ըսէ «մա՛րթ ինչ իցէ... սուգ առնել» (πενθεῖν = եղբերդել): Այս հաղորդութիւնը — ուսե՛լ ընկե՛լ և սուգ առնո՛ւ — բաւական գոհացուցիչ լուսարանութիւն մը կրնայ տալ պահեցողութեան հարցին վրայ:

Աւելորդ է ըսել թէ այս հաստատման մէջ «պահել» և «սուգ առնուլ» միևնոյն իմաստով կիրարկուած են: Արդ՝ առգը, իբրեւ հոգեկան վշտի մը արտայայտութիւնը չկրնար սահմանուիլ պայմադրական ձեւերով, հետեւաբար և «պարեցողութիւնը, իբրեւ մաս փարիսեցիական օրինապահութեան աւանդական գոյութեան՝ կը կորսնցնէ իր նշանակութիւնն ու իրաւունքը» (Հոլցման): Անիրաւ էին նենգամտօրէն խծրող զպիւրներն ու փարիսեցիները՝ առգ պահանջելով Յիսուսի աշակերտներէն՝ որոնք, հոգեկան փռատք տրանսպորտիւնները միայն (= «ուտել և ըմպել») կրնային ունենալ՝ «մինչ փեսայն ընդ նրա իցէ»: Այսպէս Յիսուս կ'արդարացնէ իր աշակերտները այն պատճառարանութեամբ որ «մանկանցն առագաստի» (= փետաւեր) օրինաւոր չէ սուգ բռնել (= ծով պահել): Յիսուսի պատասխանին մէջ նորին ազնարկութիւն մ'ալ կար օրինական պահոց դէմ գոր կ'ուզէր փոխանակել խղճի ազատութեան սկզբունքով: Յովհաննէսի աշակերտները պատճառ ունէին պահելու, առգ բռնելու վաճառքի փեսան յափշտակուած էր իրենմէ (Յովհաննէս՝ բանտարկուած էր արդէն, Մրկ. Ա. 14), Յիսուսի աշակերտներն ալ այդ սխալը հարկին տակ պիտի գտնուէին, պիտի դառնային ու սգային, «յորժամ բարձի (= ἀπαρθῆ) ի նոցանէ փեսայն»: Յիսուս փեսան է և աշակերտները փետաւերներն⁽¹⁾: Երբ փեսայ եւ փեսաւէր միասին են՝ առգը (= պահքը) անիմաստ է ինքնին: Երբ գայ «օրն այն» (Մրկ.) «ապա պահեսցեն»: Հասկանալի է թէ այդ օրը Յիսուսի եղբրական մահը կ'ակնարկէ:

Թէ Յիսուսի նպատակն էր Օրէնքի կապանքը խզել նոր Սկզբունքով մը — ազատութեամբ — կը հաստատէ իր պատասխանին յաջորդող առակը՝ որ խիստ հարուած մ'էր փարիսեցիական մոլեռանդ ըմբռնումներուն:

Յիսուս նոր Օրէնքի վարդապետն էր,

նոր վարդապետութեան մը սաստաւածային ուսողցիք, իսկ փարիսեցիները, ընդհակառակը, հին Օրէնքի ջատագովներն էին: Առաջինը «ապրեցնող հոգի»ին աղբիւրն էր, իսկ երկրորդները «սպաննող տառ»ին կոյր աւանդապահները: Բայց նոր Ուխտի ըմբռնումներն ու տրամադրութիւնները չէին կրնար հաշտուիլ հին Ուխտի պայման — օրինադրութիւններուն հետ, որոնք մասամբ «հնացեալ» էին և մասամբ ալ «մարդկային աւանդութիւն»ներով բարդուած ու պղտորուած: Յիմարութիւն է — երբ ստիպողական հարկի պահանջը չիկայ — հինգաձգեալի վրայ անթափ կապերով լրացուցիչ (= ἐπιβλήμα) ⁽²⁾ մը կարկատել (= ἐπιράπτω) ⁽³⁾: Նոր Տնտեսութիւնը իբրեւ յաւելում մը (= πλερωμα = «լրութիւն») կարելի չէ կարկատել (= պատշաճեցնել) հին Տնտեսութեան վրայ. վաճառքի այս նոր յաւելումը բոլորովին պատռւելով հինը՝ աւելի գէշ արդիւնքի մը կը յանգի նորոգութեան ձեռնարկը: Նոր և առողջ գաղափարները՝ նոր և իմաստուն կազմակերպութիւններով միայն կրնան աճիլ ու զարգանալ, ինչպէս որ «գինի նոր ի տիկա նորս արկանելի է»: Նոր գաղափարը հին մտքին հետ չհաշտուիր:

Փարիսեցիական պահեցողութիւնները, որոնց կը մասցակցէին նաեւ «անապատի ձայն»ին աշակերտները, ի մէջ այլ կրօնական չոր ու ցամաք հրահանգներու իբրեւ հին Տնտեսութեան օրէնադրութիւն, չէին կրնար իրենց գոյութեան իրաւունքը պահել նոր Տնտեսութեան մէջ: Աւետարանի վարդապետութիւնները, իբրեւ ինքնաբերական անհատական անքողոքութիւն մը, կրօնական և բարոյական աշխարհայեացքի նոր բարեշրջումով մը պիտի կրնային պահպանուիլ անվթար և յեղաշրջել Աշխարհը:

ՄԵԼԵՆԻՉ

[2] Այս բառը Հայ բարգմանութեան մէջ զանց առնուած է:

[3] ἑπιράπτωի տեղ (= վրան կարկատել), գոր ունի Մրկ., եւ գոր մեր բարգմանիչները փոխադրած են հաւասարապէս «արկանելի» Մսթ. եւ Ղուկ. կը գործածեն ἐπιβλήμα [վաղցնել, յաւելուլ, վերագրել]:

[1] ὅτι τοῦ νομοῦ νόμος «Մանկունք առագաստի» նման: φείλος τοῦ νομοῦ — «Քաւեկում փետայի» Յովն. Գ. 29. — Բղդ. ճառի Ա. Մակ. Թ. 39

ՊԱՏՄԱԿԱՆ-ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

ՅԻՍՈՒՄ

ԱՇԽԱՐՀԻ ՎԻՃԱԿԸ ՅԻՍՈՒՄԻ ԵՆԵՂԵԱՆ ԱՏԵՆ

Աշխարհի ժամը հանդիսաւոր կը դառնար, մոլորակի երկինքը մութ ու չափաչափ գուշակութիւններով լեցուն էր։

Հակառակ խորհրդագէտներու քանքին, բազմաստուածութիւնը Ասիայի, Ափրիկէի և Եւրոպայի մէջ, քաղաքակրթութեան քայքայումի մը յանգած էր միայն։ Ասիկա չստուերածեր Որփէոսի վսեմ տիեզերածրնութիւնը, ա՛յնքան պերճօրէն երգուած բայց արդէն Հոմերոսով նսեմացած։ Անոր մէջ դատապարտելի է միայն այն դժուարութիւնը՝ որով մարդկային բնութիւնը կարող չըլլար ինքզինքը պահել իմացական որոշ բարձրութեան մը վրայ։ Հին դարերու մեծ միտքերուն համար Աստուածները ուրիշ բան չէին՝ բայց եթէ բնութեան դասակարգուած ուժերու բանաստեղծական մէկ արտայայտութիւնը, անոր ներքին գործարանաւորութեան մէկ խօսուն պատկերը, և այս աստուածները տիեզերական և ոգեկան ուժերու իբրև խորհրդանշաններ է որ կ'ապրին անջնջլիօրէն մարդկութեան դիտակցութեան մէջ։ Խորհրդագէտներու մտածումով՝ աստուածներու կամ զօրութիւններու այս պէսպիսութեան մէջ չահապետած և թափանցած էր գերագոյն Աստուածը կամ զուտ Հոգին։

Մեմփիսի, Դեղփիսի և Ելեփիսի դաբիններուն գլխաւոր նպատակը եղած էր իսկապէս վարդապետել Աստուծոյ այս միութիւնը, ասոր յարակից աստուածիմաստական գաղափարներով և բարոյական հրահանգով։ Սակայն Որփէոսի, Պիւթոագորի և Պլատոնի աշակերտները անյաջողութեան մատնուեցան քաղաքագէտներու

եսականութեան, սոփեստներու գձձութեան և ամբոխին կիրքերուն առջև։ Յունաստանի ընկերական և քաղաքական քայքայումը արդիւնքը եղաւ անոր կրօնական, բարոյական և իմացական քայքայումին։ Ապոդոն, արեգակնային բանը [verbe], գերագոյն Աստուծոյ և գերերկրային աշխարհի յայտնութիւնը՝ գեղեցկութիւնով, արդարութիւնով և աստուածացումով, կը լռէ։ Ո՛չ ևս պատգամախօսներ, ո՛չ ևս ներնչուածներ, ո՛չ ևս ճմարիտ բանաստեղծներ։ Աթենաս—Իմաստութիւն և Նախախնամութիւն կը քողարկուի երգիծողներ դարձած իր ժողովուրդին առջև, որ կը սրբապղծէ Խորհուրդները, կը նախատէ իմաստուններն ու աստուածները արիստոփանեան խեղկատակութիւններով Բագոսի թասերաբեմին վրայ։ Խորհուրդներն ինքնին կ'եղծանին, վասնզի անգամներն ու արքունադիճները [courtisane] կ'ընդունուին Ելեփիսի տօնահանդէսներուն մէջ։ Երբ հոգին թանձրանայ, կրօնքը կը դառնայ տիկ կը դառնայ, երբ մտածումը նիւթականանայ, փիլիսոփայութիւնը սկեպտիկութեան մէջ կ'իյնայ։ Կը տեսնենք նաև Լուկիանոսը, հեթանոսութեան դիակին վրայ ծնած այդ միքրոպը, որ կը ծաղրէ դիցավէպերը, երբ իրմէ առաջ Կարնէադէս մերժած էր արդէն անոնց գիտական ծագումը։

Կրօնքի մէջ աւելորդապաշտ, փիլիսոփայութեան մէջ անգիտական [agnostique] քաղաքականութեան մէջ եսապաշտ ու լուծիչ, անիշխանութիւնով գինովցած և ճակատագրականօրէն նուիրուած բռնակալութեան, ա՛յս էր ահա նկարագիրը աստուածային Յունաստանին, որ մեզ փոխանցած է եգիպտական գիտութիւնը և Ասիայի խորհուրդները, գեղեցկութեան անմահ ձևերուն տակ։ Եթէ կար մէկը որ հասկցաւ թէ ի՞նչ կը պակսէր հին աշ-

խարհին, եթէ կար մէկը որ փորձեց զայն վերականգնել հերոսական և հանճարեղ ճիգով մը, առի Մեծն Աղեքսանդրը եղաւ: Այս վիպային աշխարհակալը, իր հօր Փիլիպպոսին պէս Սամոթրակէի խորհուրդներուն ընծայուած, Արիստոտէլի աշակերտ ըլլալէ աւելի Որփէոսի իմացական որդի հանգիսացաւ: Անշուշտ Մակեդոնիայի Ափիլէսը, որ բուռ մը Զոյներով նետուեցաւ Ասիայէն մինչև Հնդկաստան, աիեզերական կայսրութիւնը երազեց, բայց ո՛չ Կեսարներու նման ժողովուրդները ճնշելով, կրօնքը և ազատ գիտութիւնը ջախջախելով: Իր մեծ գաղափարն եղաւ Ասիայի և Եւրոպայի հաշտութիւնը, կրօնքներու գիտական հեղինակութեան մը վրայ յենած համադրութեամբ մը: Այս մտածումէն թելադրուած, ան յարգեց Արիստոտէլի գիտութիւնը, ինչպէս նաև Աթէնքի Աթենոսը, Երուսաղէմի Եհովան, եգիպտական Ոսիրիսը և Հնդկներու Պրահման, ճանշնալով, իբրև ճշմարիտ խորհրդագէտ, բոլոր այս խորհրդանշաններու տակ միեւնոյն աստուածութիւնը և միեւնոյն իմաստութիւնը: Կայն էր տեսութիւնը և վսեմ գուշակութիւնը այս նոր Դիոնիսոսին: Աղեքսանդրի սուրը՝ Որփէոսի Յունաստանին վերջին փայլակը եղաւ: Ան լուսաւորեց Արեւելքն ու Արեւմուտքը: Փիլիպպոսի որդին իր յաղթութեան և իր երազին գիտովութեան մէջ մեռաւ, իր կայսրութեան բեկորները թողլով յափշտակիչ զօրավարներու: Իր խորհուրդը սակայն իր հետ չմեռաւ: Ան հիմնած էր Աղեքսանդրիան, ուր արեւելեան փիլիսոփայութիւնը, հրէականութիւնը և հելլենականութիւնը պիտի ձուլուէին եգիպտական գաղտնի վարդապետութեան [ésotérisme] քուրային մէջ, սպասելով Բրիստոսի յարութեան խօսքին:

Ո՛րչափ Յունաստանի երկուորեակ-աստղերը, Ապոլոն և Աթենաս, կ'իջնէին տըժ-գունելով՝ հորիզոնին վրայ, ժողովուրդները իրենց փոթորկալից երկինքին վրայ սպառնական նշանի մը բարձրանալը տեսան. հռոմէական էգ գայլն էր այն:

Ո՛րն է Հռոմի ծագումը:

Անյազ սակաւապետութեան մը [oligarchie] դաւը յանուն անասնական ուժին. մարդկային իմացականութեան, Կրօնքի, Գիտութեան և Արուեստին ճնշումը քաղաքական աստուածացած զօրութիւնով. ուրիշ խօսքով, հակառակը ճշմարտութեան, ըստ որում կառավարութիւն մը իր իրաւունքը կը չինէ Գիտութեան, Արդարութեան և Տնտեսագիտութեան գերազոյն սկզբունքներէն: Ամբողջ հռոմէական պատմութիւնը հետեանքն է լոկ այս անիրաւութեան ինստիտութեան, որով Ատենակալ Հայրերը պատերազմ հռչակեցին նախ Իտալիոյ և ապա մարդկային ազգին դէմ: Անոնք լաւ ընտրեցին իրենց խորհրդանիշը: Պղնձեայ գայլը, որ կը ցցէ իր շէկ բաշը և կ'երկարէ իր բորենիի գլուխը Կապիտոլի վրայ, այս կառավարութեան պատկերն է, դեւ՝ որով պիտի գրաւուի հռոմէական հողին մինչև վերջ:

Գէթ Յունաստանի մէջ յարգանքի առարկայ եղան. միշտ Դեդփիսի և Ելեւսի դաբիրները: Հռոմի մէջ սկիզբէն ի վեր մերժուեցան Գիտութիւնն ու Արուեստը: Ետրուրեան խորհրդագէտ՝ իմաստուն Նուամայի նախափորձը ատենակալ հայրերու կասկածոտ փառասիրութեան առջև անյաջողութեան մասնուեցաւ: Ան իր հետեւեալ սիրիլական գիրքերը, որոնք Հերմէսի գիտութեանէն մաս մը կը պարունակէին: Ժողովուրդին կողմէ ընտրուած իրաւարար դատաւորներ կազմակերպեց, անոր հողեր բաժնեց, բարձրացուց տաճար մը Անկեղծութեան և Յանութեան, սրբագիր՝ Ի Օրէնքին տիեզերականութիւնը կը նշանակէ. ան՝ պատերազմի իրաւունքը Բուրմերուն տրամադրութեան տակ դրաւ: Ուրեմն Նուամա թագաւորը, զոր ժողովուրդին յիշողութիւնը չգաղղեցաւ սիրելի և զոր կը նկատէր իբրև երկնային ոգիէ մը ներշնչուած, կարծես կառավարութեան մէջ սրբազան գիտութեան պատմական մէկ միջամտութիւնն է: Ան չներկայացներ հռոմէական ոգին, այլ ետրուրեան խորհրդագիտութեան ոգին որ Մեմփիսի և Դեդփիսի դպրոցներուն հետ միեւնոյն սկզբունքներուն կը հետեւէր:

Նուժայէն հաքը, հռոմէական ծերա-
կոյար այրեց սիրելական գիրքերը, ջնջեց
փրակները հեղինակութիւնը, քանդեց
իրաւնորական դպրոցները և վերադար-
ձաւ իր դրութեան, ուր կրօնքը սուրիշ բան
չէր բայց եթէ քաղաքական անարարութե-
ան գործիք մը: Հռոմը եղաւ հիգրան, որ
ժողովուրդները իրենց աստուածներովը
կլկեց: Երկրին ազգերը տակաւ առ տակաւ
նուաճուեցան ու կողոպտուեցան: Մամու-
րեան բանտը հիւսիսի և հարաւի թագա-
ւորներով լեցուեցաւ: Հռոմ, չուզելով
ուրիշ քահանաներ գերիներէ և շաղակրատ-
ներէ զատ, կ'ապանէր Դալլիոյ, Եգիպտոսի,
Հրէաստանի և Պարսկաստանի մէջ, գաղա-
նի վարդապետութեան աւանդութեան վեր-
ջին աւանդապահները: Ան պաշտել կը
ձեռնդէ Աստուածները, բայց իր գայլը մի-
այն կը պաշտէ խկապէս: Եւ հիմա, ա-
րիւնտտ արշալոյսի մը մէջ, ժողովուրդնե-
րուն կ'երեւի այս գայլին վերջին որդին,
որ կը խառնէ Հռոմի ոգին, Կեսարը:
Հռոմը ընկուզեց իր մէջը ժողովուրդ-
ները. Կեսար, անոր մարմնաւորումը, կը
լսուի բոլոր իշխանութիւնները: Կեսար
ոչ միայն ազգերու կայսր բլաւու ցանկու-
թիւնն ունի այլ նաեւ իր գլխին վրայ միա-
ցլնելով ապարօշէ արտախուրակը՝ ան
ինքզինքը կոչել կուտայ մեծ քահանայա-
պետ: Թափոսի պատերազմէն հաքը, ա-
նոր դիւցազնական աստուածացումը կը
քուէարկուի, Մունասայի ճակատամարտէն
վերջ՝ դիցական աստուածացումը, յետոյ
Կուիրինոսի մեհեանին մէջ իր արձանը
դրուեցաւ ոպասարկողներու մէկ դասով՝
որ իր անունը կը կրէր. քուրմերը — Յու-
լիոսեանք —: Իրերու ծայրագոյն հեղ-
նութեամբ մը և գերագոյն սրամարանու-
թեամբ մը այս միւսնոյն Կեսարը, որ ինք-
զինքը կ'աստուածացնէ, կ'ուրանայ հոգի-
ն անմահութիւնը ամբողջ ծերակոյտին
առջև: Բաւական է՝ ըսել թէ Կեսարէն
զատ Աստուած չիկայ:

Հռոմ, ժառանգորդ Բարեւոյնի, իր Կե-
սարներով կ'երկարածէ իր ձեռքը բո-
վանդակ աշխարհի վրայ: — Արդ՝ ի՞նչ եղաւ
հռոմէական Պետութիւնը: Հռոմէական

Պետութիւնը դուրսը վր փճացնէ հաւաքա-
կան ամէն կեանք: Իտալիոյ մէջ զինուո-
րական գիկտտոր, գաւառներու մէջ կա-
ռավարչներու և հարկահաններու հա-
րըտահարութիւններ: — Աշխարհակալ Հը-
ռոմը յարալէզի մը պէս պառկած է հին
ընկերութիւններու դիակին վրայ:

Եւ հիմայ հռոմէական բաքոսածոր
հրապարակաւ կրնայ ցուցադրուիլ իր մա-
լութիւններուն շուայտանքով և իր սծիւ-
ներուն սողանցումով: Ան կ'սկսի Մարկոս
Անտոնիոսի և Կլէոպատրայի հեշտակց
հանդիպումովը, ու պիտի աւարտի Մե-
սալինայի ցոխութիւններով և Ներոնի մա-
լեղնութիւններով, Ան կ'սկզբնաւորի խոր-
հուրդներու լկաի ու հրապարակայն ծե-
քանքով, ու պիտի վերջանայ հռոմէա-
կան կրկնվին մէջ, ուր չիկահեր գաղան-
ներ պիտի խոյանան իրենց հաւատքին հա-
մար մարտիրոսացող մերկ կոյսերուն վրայ,
քան հաղար հանդիսատեսներու ծափահա-
րութիւններուն մէջ:

Սակայն, Հռոմի նուաճած ժողովուրդ-
ներուն մէջ, կար մէկը որ Աստուծոյ ժո-
ղովուրդը կ'անուանուէր, և որուն ոգին
հռոմէական ոգին հակադիրն էր:

Ինչպէս կ'ըլլայ որ Իսրայէլ, իր ներ-
քին կռիւներով ու ժառապաւ, երեք հարիւր
տարուան ստրկութեամբ մը ջախջախուած
իր հաւատքը աննուաճ պահած էր: Ինչո՞ւ
այս պարտուած ժողովուրդը յունական ան-
կումին և հռոմէական շուայտանքին դի-
մայ կը կանգնէր մարգարէի մը պէս, գը-
լուխը մոխիրներու պարկով մը ծածկուած
և աչքերը ահաւելի բարկութեամբ մը բո-
ցավաւ: Ինչո՞ւ կը համարձակէր ան նա-
խապուշակել անկումը այն իշխաններուն,
որոնց սաքը իր կոկորդին վրայ էր, և իւ-
սիլ չեմ գիտեր ո՞ր վերջնական յալթու-
թեան մասին, երբ ինքն ալ իր անվերա-
կանգնելի կործանումին կը մօտենար Պատ-
ճառը այն է որ մեծ գաղափար մը կ'ապ-
րէր իր մէջ: Այն գաղափարը Մովսէս մրա-
ցուցած էր անոր գլխուն մէջ: Յետուի
օրով տառներկու ցեղերը յուշարար քար
մը կանգնած էին սա արձանագրութեամբ,
«Ասիկա մեր մէջ վկայութիւն մ'է թէ
Նահլէն է միակ Աստուածը»:

Մովսէսի գիրքին մէջ մենք արդէն տեսանք թէ ի՞նչպէս և ինչո՞ւ Իսրայէլի օրէնադիրը միաստուածութիւնը բրած էր անկրեւաքարը իր գիտութեան, իր ընկերական օրէնքին և տիեզերական կրօնական գաղափարի մը: Նա ճարտար գլուխեցաւ հասկնալու թէ այս գաղափարին յաղթանակէն կախում ունէր մարդկութեան ապագան: Չայն սրահելու համար մենեւնազիր Դիրք մը գրած, ոսկեղէն Տապանակ մը չինած և ժողովուրդ մը անապատի թափառական թշուառ վիճակէն յարուցած էր: Հոգեպաշտական գաղափարին այս վկայութիւններուն վրայ Մովսէս սաւառնեցուց երկինքի կրակը և որոտացուց շանթը: Անոնց դէմ դաւակցեցան ոչ միայն Մովսէսիները, Փղշապիները, Ամաղեկացիները և Պաղեստինի ամբողջ բնակչութիւնը, այլ նոյնիսկ Հրեայ ժողովուրդին կիրքերն ու տկարութիւնները: Դիրքը դադրեցաւ քահանայութեան հասկընալի բլաթ, Տապանակը թշնամիներէն զրաւուցաւ և հարիւր անգամ ժողովուրդը իր պաշտօնը մոռնալու տկարացումը ունեցաւ: Այս բոլորին հակառակ ինչո՞ւ ուրեմն հաւատարիմ մնաց անոր: Ինչո՞ւ Մովսէսի գաղափարը Իսրայէլի ճակտին վրայ և սիրտին խորը կրակէ գրեթէ քանդակուած մնաց: Որո՞ւն պէտք է պարտիլ այս տարածմբ յարատեւութիւնը, այս վեհապանծ հաւատարմութիւնը խռովալոյց և չարադէտ դէպքերով լեցուն պատմութեան մը դիմացեղութիւնը մէջէն. հաւատարմութիւն մը՝ որ աղբիւր մէջ Իսրայէլին կուտայ իր անդուգական և յատկանշական պատկերը:

Համարձակօրէն կրնայ պատասխանուիլ. մարգարէներուն և մարգարէութեան հիմնադրութեան: Տիրապէս և բերանացի տաւանդութիւնով, ան մինչեւ Մովսէս կը բարձրանայ: Երբայցի ժողովուրդը իր պատմութեան բովանդակ ժամանակամիջոցներուն մէջ մինչեւ իր ցրուումը նապիներ ունեցած է: Բայց, մարգարէական հիմնադրութիւնը առաջին անգամ Սամուէլի դարուն մէջ կազմակերպուած ձեւի մը տակ կ'երեւայ մեղի: Սամուէլն էր որ

հաստատեց Նապիական այս եղբայրութիւնները, մարգարէներու այս դպրոցները, նորածին թագաւորութեան մը և արդէն ալլասերած քահանայութեան մը հանդէպ: Մովսէսի գաղտնի վարդապետութեան աւանդութեան և տիեզերական կրօնական մտածումին խոսամբեր պահապանները բրաւ դանոնք թագաւորներուն դէմ, որոնց մէջ պէտք է չահապետէր քաղաքական գաղափարը և ազգային նպատակը: Այս եղբայրութիւններուն մէջ պահուեցան արդարեւ Մովսէսի գիտութեան մնացորդները, որբազան երաժշտութիւնը իր եղանակներով և կարողութիւններով, ծածուկ բժշկականութիւնը (therapeutique), վերջապէս գուշակութեան արուեստը, զոր մեծ մարգարէները կիրարկեցին հակա զօրութիւնով մը, բարձրութիւնով մը և անձնութեամբով մը:

Գուշակութիւնը զանազան ձեւերու տակ և միջոցներով գոյութիւն ունեցած է բոլոր հին շրջանի ժողովուրդներուն մօտ: Բայց Իսրայէլի մէջ մարգարէութիւնը ունի տարածում մը, հեղինակութիւն մը, որ առնչակից է իմացական և հոգեկան բարձր երկնագաւառին, ուր միաստուածութիւնը կը պահէ մարդկային հոգին: Տառի աստուածաբաններու կողմէ իբրեւ անձնական Աստուծոյ մը ուղղակի հաղորդակցութիւնը ներկայացուած մարգարէութիւնը, զոր բնապաշտիկ փիլիսոփայութիւնը կ'ուրանայ իբր զուտ աւելորդապաշտութիւն մը, իրապէս ուրիշ բան չէ բայց եթէ Հոգիին տիեզերական օրէնքներուն դերագոյն յայտնութիւնը:

Այնպէս դեկալորով բնահանուր ճշմարտութիւնները, կ'ըսէ Էվալտ իր՝ մարգարէներուն վրայ գեղեցիկ գիրքին մէջ, ուրիշ խօսքով Աստուծոյ խորհուրդներ անփոփոխելի և անվանդ են, իրերու ծրփանքներէն, մարդուն կամքէն և գործերէն բոլորովին անկախ: Մարդս սկզբնաբար կոչուած է անոնց մասնակցելու, զանոնք հասկնալու և ոգտաօրէն իրազործելու: Ասով է միայն որ ան իր բուն և ճշմարիտ նպատակին կը հասնի: Բայց որպէսզի Հոգիին Բանը (Verbe) թափանցէ մեզէն մարդուն մէջ, պէտք է մարդը խորապէս ցնցուած ըլլայ պատմութեան մեծ սասանութիւնով: Այն ատեն յաւիտեական ճշմարտութիւնը անկէ կը ցայտէ

լոյսի տողանի մը պէս : Ասոր համար է որ
այնքան յաճախ ըսուած է Հին Կտակա-
րանի մէջ թէ՛ Եսայիէն կենդանի Աստուած
մըն է : Մարդ երբ երկնային կոչը լսէ՝
նոր կեանք մը կը շինուի իր մէջ, ուր
ալ մինակ չղգար ինքզինքը, այլ Աս-
տուծոյ և բոլոր ճշմարտութիւններուն հա-
ղորդակից և ուր ան պատրաստ է ճշմար-
տութենէ մը զէպի ուրիշ ճշմարտութիւն
քալելու մինչեւ յաւիտեան : Այս նոր կեան-
քին մէջ իր մասածումը տիեզերական կա-
մեցողութեան հետ կը նոյնանայ : Ան
ներկայ ժամանակին պայծառ տեսութիւնը
և աստուածային գաղափարին վերջնա-
կան յաղորդութեան բովանդակ հաւատքը
ունի : Ասի զգացող մարդը մարգարէ է,
այսինքն անդիմադրելիորէն մղուած կը
զգայ ինքզինքը՝ յայտնուելու ուրիշներուն
իբրեւ Աստուծոյ ներկայացուցիչը : Իր մը-
սածումը տեսիլ մը կ'ըլլայ և այս գերազան-
շուէ՛ր որ իր հոգիէն ճշմարտութիւնը կը
բխեցնէ, երբեմն զայն խորտակելով, կը
կազմէ մարգարէական տարրը : «Մարգա-
րեական յայտնութիւնները պատմութեան մեջ
շանթի հարուածները եւ ճշմարտութեան փայ-
լաստումները եղած են» (Էվալա, Մար-
գարէները. — Ներածութիւն) :

(Նարուցակելի)

Ed. Schuré
(Les Grands Initiés)

Թարգմ. ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼ

ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ

Մանչեսթրէէն Յովնանէս Է. Գամպեր-
եան մէկ տարեկան Տաճար կը նուիրէ Մար-
գուանի Տ. Մամբէ Բնկ. Թեմիկեանի :

Նասիպ Է. Զեզվեհեան մէկ տարեկան
Տաճար Սեբասթիոյ Ազգ. Որբանոցի Մա-
սենաղարանին :

Իսկ Երուանդ Է. Պէյազեան մէկ մէկ
տարեկան Տաճար կը նուիրէ Տիկնանց Մի-
ութեան եւ Դպրոցասիրաց Ընկերութեան :

ԿԱՐԵՒՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ Գ. ԹԻԻԷՆ

Էջ	Միւնակ	Տող	Միւս	Ուղիղ
66	1	3	չորջ	չունչ
78	2	22	կ'ողեւորին	կ'ողեւորեն
79	2	5	հաղարաւոր	հռչակաւոր
80	1	7	heavene	heaven
80	1	8	drams	dreams
80	1	30	ծածկուած	ծակծկուած
80	1	36	խիղճը	խելքը
88	1	20	անհատանարար	անհատարար

„ՏԱՃԱՐԷ՛Ի՛ ալցեփաւրսը

ՏԱՃԱՐԷ՛Ի՛ Խմբագրութիւնը

Նորոգեալ կեանքի մը շնոր մաղթանքներով

ԿԸ ԵՆՈՐՀԱՌՈՐԷ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԸ

ԱՄՍՆՈՐԻ ԵՒ Ս. ԵՆՈՒՆԵՐԻ

առիքով :

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

ԺԱՄԱՆԱԿ

Մեր ողբացեալ եղբայրակցին՝ Կորիւն՝ Վար դասիէ
ԺԱՄԱՆԱԿ անուն ձեռագիր գործէն, որ խառն զս-
նական նիւթերէ կը բաղկանայ, Նոր Տարիի առիքով
պատշաճ կը տեսնենք ստորեւ հրատարակել անոր առա-
ջին նիւթը կազմող Ժամանակի Ա. հասումը :

ձիշտ այսօր երբ որ Ժամանակի ապաւան մահով
մը անհետացող խեղճ հեղինակը, Մարաշի մէջ, հի-
շանդութեան անկողինը կը մտնէր, համակուած յու-
սահաս քախտութեամբ մը՝ որով կը դիտէր ապրախս
խումբի մը իր բոլոր օգտաւէ ջանքերը շատող ան-
ազնիւ ընթացքը, ձիշտ ապա մը վերջ մահուան խումբ
վնասալու համար, անմխիթար սուգի մը մէջ բողբոլ
իր անարին վերեւ հսկող եղբայրը :

Հակառակ իր հիշանդութեան, նա այդ օրը, 1908ի
նախորդ գիշերը, լիւր գիտէր ինչ տնայնաւոր
գուռէ մը քիչադրուած, իր իսկ ձեռքով իր փոքրիկ
ննջատեղեակին մէջ—որ յաւիտեական նիւթն ալ տե-
ղի ունեցաւ,—պատշաճեց համեմատ սեղան մը, հոսկ
սեղան մը, որուն մասնակցեցան իր բոլոր պանդխ-
տակիցները : Անհետ է ինձ պարզել հոս այդ գիշե-
րուն անցնան վրդովից հոգեքանութիւնը...

Այսօր, այդ տնայնաւոր վերջաւորութիւնը ցնցուած, Տաճարի
մէջ ստեղծուած Կաղանդի առ զրական սեղանին վրայ
կուգանք, իբրեւ սգակիր եղբայր այդ պտրախս երի-
տաստի կրօնաւորին, անոր գրչի վաստակին ալ քա-
ժիկ մը դնել, քաղաքով ապրեցնել անոր յիշատակը
այն անասնման եւ անպարտաւոր ժամանակին մէջ՝
որ ի՛ր ալ գերեզմանը եղաւ, իր համոզումին համա-
ժայն :

ԳԱՐԵՒԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Ա .

Ժամանակ, միջոց, անհունութիւն-
գաղափարներու և տեսութեանց ընդար-

ձակ ասպարէզներ կը բանան մարդուն առջեւ որոնք կարծես թէ իրենց ընդարձակութեամբը և անսահմանութեամբը կը լեցնեն մարդկային սահմանաւոր ուղեղը: Բնականաբար չենք կրնար մտածել թէ ասոնք լառեր են լսկ, որ իրականութիւն չունին և չեն կրնար ալ ունենալ: Իրականութեան սղբերն են ասոնք, զոր կ'ընդգրկեն, և որ լուծուած է անոնց մէջ ինչպէս որ անհուն և անսահման Ովկիանոսին մէջ կը կորսուի որ և է տարբեր հեղուկ: Մարդկային ուղեղը չէ ստեղծած զանոնք, վասնզի մարդէն առաջ գոյութեան իրաւունքը կը պահեն, այն օրէն սկսեալ, երբ առաջին անգամ ընտելիւնը իր հիմն ու խարխիւր դրաւ: Բնութիւնը անոնց և անոնք բնութեան մէջ:

Միջոցն ու անհունութիւնը, իրենց մէջ կ'ընդգրկեն, կ'ծածկեն ամէն բան, ամէն տարածութիւն, լայնութիւն և խորութիւն, տիեզերքի ամէն աստղ, արեւ, մոլորակ, վերջապէս անհունապէս մեծէն սկսեալ անհունապէս փոքրը: Մեր դաշտերուն կը նմանին անոնք, ուր նետուած սերմերը կը կորսուին և անոնց տարածութեան, ընդարձակութեան համեմատութեամբ ոչինչ են, այսպէս ալ միջոցի անհունութեան մէջ ցանուած սերմեր են երկիրը, մոլորակները, ասպղերը, արեւները և բոլանդակութիւնն ամբողջ տիեզերական անսահմանութեան: Ոչ ոք կրնայ զանոնք չափել, մարդկային միտքը տկար է անոնց անհասանելիութեան առջեւ. ու անոր կեանքը չատ կարճ է, նոյնիսկ հազարուոր սերունդներու իրարու յաջորդական սողանցումը անկարող է զանոնք չափել, կշռել, համեմատել: Մարդը բան մը միայն կրնայ ընել, հնազանդիլ, խոնարհիլ և պատկառօտ կերպարանքով մը ի ծուր իջնել անոնց առջեւ, վասնզի բնութիւնն իսկ են, ու անոր առջեւ հիւլէներ են մարդիկ: Մեծ առարկաները փոքրիկը իրենց կը քաշեն. բնութիւնը կազմող այդ միջոցը, անհունութիւնը իրենց կը քաշեն զմեզ, մենք ալ իրարեւ տկարներ պէտք է յարգենք զանոնք մեր մարմնով, հոգիով, զգացումներով, երեւակայութեամբ, մեր

ամբողջութեամբ՝ երկնասլաց սաւառնումներով:

Ասոնց ամենուն լուսաւոր պսակը չէ՞ արդեօք ժամանակը, զոր կ'անջատենք անոնցմէ, յետոյ մասնաւորելու համար ուղղակի մեր ժամանակին հետ: Ժամանակն ալ ինքն իր մէջ անհունութիւն մըն է, մարդուն հետ ստեղծուած չէ, ոչ մարդը ստեղծած է զայն և ոչ իսկ աշխարհ, ան գոյութիւն ունէր մարդէն առաջ, աշխարհէն առաջ: Գուցէ մէկ վայրկեանի մէջ ստեղծուած են ժամանակ, միջոց, անհունութիւն, եթէ կարելի է ընդունիլ անոնց համար ստեղծագործութիւն մը: Զիրար կը յատկանշեն, զիրար կը բացատրեն, զիրար կ'ամբողջացնեն, անբաժանալի երրորդութիւն մը կը կազմեն, որոնց մէն առանց միւսին չկրնար ըլլալ: Մարդը միջոցին, անհունին գաղափարը թէպէտ կրնայ ունենալ, և սակայն այդ գաղափարը ինք չկրնար ըմբռնել, սահմանել, չափել. միշտ միութեան վարագոյր մը քաշուած պիտի մնայ մարդուն մտքին և անոնց միջեւ: Բայց, ժամանակը այնպէս չէ՞ թէպէտ սա ալ ըմբռնելը, սահմանելը և հասկընալը դժուար է, բայց որովհետեւ իր կեանքին հետ կրնայ հանգիստութիւններ ունենալ և աչքի զարնող համեմատելի կողմեր, հետեւաբար զայն յարմարացուցած է անոր ու մասնաւոր ուղղութիւն մը տալ ջանացած է: Սակայն այս պատրանք մըն է լոկ:

Մարդը, սկիզբէն ի վեր, այն օրէն իսկ երբ իր գիտակցութեան արթննալը զգաց ու զննելու կարողութեան տիրացաւ, սկըսաւ այլ և այլ կարճ և երկայն չըջաններ սահմանել ու ժամանակին մէջ պարփակել: Ժամանակը տեսակ մը միութեան կապ եղած է իր ձեռքը և համեմատելէ յետոյ զայն իր կեանքին հետ, արդիւնքը ստորաբաժանումներով ներկայացուցած է: Երկիրը իր չըջանը կը կատարէ, օդը կը փոխուի, միջոցները այլ և այլ դիմայեղումներ կ'ընդունին ու մարդը այնպէս կը կարծէ թէ ժամանակն է փոխուողը, թէպէտ այդ փոփոխութեանց և բոլոր դիմայեղումներուն միութեան կապը միշտ ժա-

մանակն է : Ժամանակը ո՛չ կ'երկարի , և ո՛չ ալ կը կարճընայ : յաւիտեանից ի վեր անփոփոխ է ան : Իրողութիւններն են որ կը փոխուին , բայց մարդիկ ընկալեալ սովորութեան մը համեմատ կ'ըսեն թէ Ժամանակն է որ կը փոխուի , կը ծերանայ , կամ կ'երիտասարդանայ , կ'առատանայ կամ կը նուազի : Սակայն այնպէս չէ՛ , աշխարհ համայն , մեր վիճակը , կացութիւնը , մեր ապրելու կերպը , մեր գործելու եղանակները կը փոխուին շարունակ , մինչդեռ Ժամանակը նոյն է միշտ , անհուն է միշտ և անփոփոխ : Բոլոր այս յատկութիւնները ան պիտի պահէ յաւիտեան թէ աշխարհ իսկ կործանի , բայց բնութեան համար կործանում , ոչնչացում չիկայ : Անկարելի է որ մարդը կամ նոյն իսկ բնութիւնը կարենան զանկա փոփոխել , կարճեցնել կամ երկարել , վասնզի անոնցմէ դուրս է , անոնցմէ առաջ գոյութիւն ունեցած է և պիտի ունենայ : Եւ ոչ մէկուն իշխանութեան տակ կ'իշխայ ան , բացարձակ իշխանութիւնը իր ափին մէջն է , մականը ունի , որով կը տիրապետէ մարդկութեան բնութեան վրայ , տիեզերաց վրայ : Անհունութեանց մէջ գտնուողները ամէնքն ալ կրնան փոխուիլ բայց Ժամանակը կը մնայ նոյն միջոցին հետ և անհունին հետ : Մենք մարդիկս , անոր անսահման և մեծագոր իշխանութեան տակ կը գտնուինք , իր անյեղլի օրէնքները կը ծանրանան մեր ամէնուս վրայ , իր անչափելի զօրութեան և ներգործութեան տակ ընկճուած կը փոխուինք , կը մաշինք ու կը մեռնինք և Ժամանակը կ'ըլլայ այսպէս մեր գերեզմանը :

Ժամանակը ո՛չ անցեալ ունի , ո՛չ ներկայ և ո՛չ ալ ապաւնի , մարդոց ստեղծածներն են ասոնք , իրականութեան մէջ գոյութիւն չունին , մարդկութեան համար միայն անցեալ , ներկայ և ապաւնի կայ : Ժամանակը մեծաքանակ իր մէջ կը պարունակէ այդ երեքը , ոչ սահմանում և ոչ բաժանում կ'ընդունի , մարդկութեան համար գոյութիւն ունին , անցեալ մարդկութիւն , ներկայ մարդկութիւն , ապաւնի մարդկութիւն : Միջոցը կամ Ժամանակը

նալը երկու ընդունարաններ են , որոնց մէջ կը գտնուին բոլոր բաներն ալ , ոչ մէկ բան գոյութիւն ունի անոնցմէ դուրս , տիեզերական իշխանութեան պայմաններն անոնք , երկուքն ալ անհուն են և առանց անոնց անհունութիւնը գոյութիւն չէր կրնար ունենալ : Թէ իսկ աշխարհ կործանի բովանդակապէս , դարձեալ Ժամանակը կը գլտորի , իր կեանքը կը պահէ , վասնզի ան չպարփակուիր երկրի կեանքին , արեւու կեանքին և կամ ուրիշ մուրաւի մը կեանքին մէջ : Սահման չենք կրնար սալ Ժամանակին և միջոցին , իւրաքանչիւր անոնցմէ ինքնիրմով սահմանաւորուած է :

Ժամանակին մէջ յառաջ կուգան երեւոյթները և բոլոր պատահարները , իսկ միջոցին մէջ՝ առարկաները և գոյութիւնները : Ժամանակը նոյնիսկ տեւողութիւնն է , իսկ միջոցը անհուն և անսահման տարածութիւնը : Ժամանակը այն բեղնաւոր մայրն է , որ անհունութիւնը լինող աշխարհներ կը ծնի ու միջոցը այն անհուն օրորոցն է , որուն մէջ անոնք կը հանգչին ու կը թաւալին անվերջ և անդադար : Ասոր համար Ժամանակը ոչ նոր է և ոչ ալ հին : Նա իր ծագումէն ի վեր , եթէ երբեք ծագում ունեցած է , անփոփոխ է , և նոյն անփոփոխութիւնը պիտի պահէ իր վախճանին մէջ՝ եթէ ունենայ : Այս անփոփոխութիւնն է որ բնաւ : ստարեբութիւն մը երեւան չբերեր երէկուան և այս օրուան , անցեալ ստորուան և այս ստորուան մէջ : Մթնոլորտի փոփոխութիւնը Ժամանակի փոփոխութիւն չնշանակեր երբեք : Մարդիկ յաւիտեապէս կը փոխուին ու մեզի հետ ամէն բան , և յաւէտ Ժամանակի ազդեցութեան ենթակայ ենք , Ժամանակը անփոփոխ է ու գուցէ նա կը ծաղրէ մեր սղայամասութիւնը , որուն՝ որպէս թէ փոփոխութիւնը կը դիտենք կամ դիտել կը կարծենք : Ժամանակը յատուկ փոփոխութեան մը ենթակայ է , որուն արդիւնքն են օր , ամիս , տարի , դար , նոր դար , հին դար , նոր Ժամանակ , անցեալ Ժամանակ և ապաւնի Ժամանակ բացատրութիւնները , երջանկութեան Ժամանակ ,

դժբախտութեան ժամանակ, վիշտ ու ցաւ-
ւերու ժամանակ, ուրախութեան ու ցըն-
ծութեան ժամանակ, ասոնք սակայն մար-
դուն կեանքին վերաբերմամբ նշանակու-
թիւն մ'ունին: Բուն «ժամանակն ընու-
թեան տեւողութիւնն է, իսկ յաւիտենա-
կանութիւնը՝ Աստուծոյ յականութիւնը»:
Իսկ Տերտուղիանոս կ'ըսէ՝ «ժամանակն
մեծ վարագոյր մըն է յաւիտենականին տու-
ջիւ տարածուած՝ զայն մեզմէ կը ծածկէ»:
Այս բնդարձակ տեւողականութեանու-
թեան միջոցին է որ ամէն բան տեղի կ'ունե-
նայ, բնական ամէն յեղաշրջում. ամէն տե-
սակ եղափոխութիւն, յեղափոխութիւն,
դժուրութիւն, գիւտ, գիտութիւն, յառաջդի-
մութիւն, զարգացում, որոնք միշտ կը
կատարուին անդադար: Ասոր համար է որ
կրնայ արդարանալ Պապօնի սա խօսքը
թէ՝ «ժամանակը՝ նորոգիչներու (nova-
teur) ամենէն մեծն է»:

Ժամանակին մէջ կը ծնի ամէն բան և
կը մնայ: Ժամանակը կենդանութեան և
մահուան միջոցն է սերնմն՝ միեւնոյն ատեն:
Ժամանակի անհուն տեւողութեան միջո-
ցին երեւան եկած են տիեզերական լու-
վանդակութիւնը կազմող արեւները, լու-
սինները, աստղերը, մոլորակները, երկիրը
և մարդկութեան հազարաւոր սերունդներ
որոնք միշտ իրարու յաջորդած են անխու-
փան: Մարդիկ ժամանակը պատշաճեցու-
ցած են իրենց կեանքին և կամ աւելի լաւ
չըջկով խօսքը կեանքերնին պատշաճեցու-
ցած են ժամանակին: Սխալ հասկացողու-
թեան մը և սխալ ըմբռնումի մը համեմատ
այնպէս կը կործին թէ ժամանակը կ'առնէ
կ'անցնի, ո՛չ կ'առնէ և ո՛չ ալ կ'անցնի,
անշարժութեան մէջ է ան, և թերեւս ա-
ւելի ինք հանդիսատես է բոլոր անցած-
ներուն ու պիտի ըլլայ տեղի ունենալիք-
ներուն: Ժամանակը չէ որ կ'անցնի, այլ
նոյն իսկ կեանքն է որ իւրաքանչիւր ան-
հասի մէջ, իւրաքանչիւր առարկայի կամ
նիւթի մէջ կ'անցնի: Թէպէտ աւելի լաւ
է ըսել թէ նիւթն է՝ մարդուն մարմնին
որ կ'անցնի և ո՛չ թէ կեանքը որ կը տե-
ւու պիտի տեւէ յաւիտեն: Բնութեան մէջ
բան մը չկորսուիր: «Յաւիտենական իտր-

նորդը՝ կենաց երազութիւնը կ'սփոփէ»
կ'ըսէ Մալէրայ՝ իրաւամբ:

Մարդուն կեանքին օրերն ուրեմն բը-
նաւ չեն կորսուիր գէթ այդ յաւիտենա-
կանութեան շնորհիւ, վասն զի «Չուրերն
յովկիան ընթանան, օրերն ի յաւիտենա-
կանութիւն»:

ԿՈՐԻՆՏ ԱՍՏՐԱՊՅՑ

+ 1908 Յունվար 29

ԻՆՏԵՆԱՃԱՆԱԶՈՒԹԻՒՆ

Այն մարդը որ լաւ ուսումնասիրած է
իր անձը, կրնայ զգալ տարողութիւնն ու
սահմանները իր կարողութիւններուն,
վասն զի մարդս ինքնաճանաչութեամբ է
որ որոշ գիտակցութիւն մը ձեռք կը
բերէ իր պարտականութիւններուն վե-
րաբերութեամբ, և էսկի մը բնութիւնն
է որ կ'որոշէ իր ճակատագիրը:

Յունաստան, որ հին քաղաքակրթ
աշխարհներուն մէջ առաջինը կը հանդի-
սանար իբր կեդրոն ժամանակակից գի-
տութեան ու կը պանծար իր փիլիսոփա-
յութեամբ, շատ տարտամ վիճակ մը ու-
նէր կանխաւ: Իմաստասիրութիւնը՝ որուն
ամէնէն աւելի սերահար էին Հէլլենները՝
կորսուած էր նիւթական աշխարհի ամէն
տեսակ հայեցողութիւններուն մէջ, այնպէս
որ իրապէս տիեզերաբանական նկարագիր
մը ունէր ան: «Սոկրատ» սակայն կրցաւ
որոշ ուղղութիւն մը տալ անոր. այսինքն
մարդկային հոգիին ուսումնասիրութիւնը
և այսպէսով կերպով մը իւրացուց այն
սկզբունքը՝ զոր մինչև այն ատեն արձա-
նադրուած կը տեսնէին Դելփիան մեհա-
նին ճակատը «Ծանիր զքեզ»: Սկզբունք
մը կամ թէ բանք վարդապետութիւն մը՝
զոր մինչև իր վերջին շունչը քարոզեց ու
պաշտպանեց մեծ իմաստասէրը, վասնզի
շատ լաւ համոզուած էր թէ զործնական
կեանքի մէջ մէկէ աւելի օգուտներու
սկզբնապատճառ կրնար ըլլալ ան:

«Սոկրատ» մարդկային ինքնաճանա-
չութեան մէջ փիլիսոփայական նուրբ հա-

յեղողութիւններէ և կարգ մը անհասկնալի գիտական բանաձեւերէ աւելի կ'ուզէր ընդհամարել իրական ու գործնական առաւելութիւններ, որոնց պէտքը կ'զգային մարդկութիւնն ընդհանրապէս և Հելլէնները մասնաւորապէս։ Որովհետեւ ընդունուած իրողութիւն մըն է թէ՛ անձին գիտակցութիւնն ունեցող անհասար գիտէ թէ ի՞նչ բանի կարող է և ի՞նչ բանի անընդունակ։ ՊՈՒԱԼՕ, իր «Արուեստ Բանաստեղծականին» մէջ կը յանձնարարէ պուէսներուն ո՛չ միայն ինքզինքնին ուսումնասիրել, այլ նաեւ քաջ գիտնալ թէ ինչ ձիրքով կամ ընդունակութեամբ օժտուած են ի ընէ, վասնզի բնութեան ներշնչումը իւրաքանչիւր ոք իր անհատական տրամադրութիւններուն ու խառնուածքին համաձայն կ'ընդունի միայն, ապա թէ ոչ այլապէս մարդկութիւնը պէտք էր բանաստեղծ ըլլար ամբողջապէս։ Տեռասիոս ալ իր յաճախ ներշնչած է զՊուալո՝ նոյնպէս կ'պնդէ իր սեփական ուժերը լաւ ճանչնալու հարկին վրայ։ Հետեւապէս իրաւունք կ'ունենայ «Սովորատ» ինքնաճանաչութեան մէջ՝ իր ձեռնարկները ուժերուն հետ համեմատելու գործնական առաւելութիւնը տեսնելու, ինչ որ բացարձակապէս անհրաժեշտ պայման մըն է յաջողելու համար կեանքի կռիւին մէջ։ Ամէն առնալ որ չեն գիտեր թէ ի՞նչ է իրենց իսկական կոշումը, ապահովաբար կը մատնուին ձախողելու վտանգին ու վերջապէս կ'իյնան դժբախտութեան անդունդին մէջ։ Կ'տեսնուի ուրեմն թէ ինքնաճանաչութիւնը անհրաժեշտ է որչափ ժողովուրդներու նոյնչափ նաեւ մասնաւորներու համար։ Այսպէս զոր օրինակ փոքր պետութիւնները առանց նախապէս իրենց երկրին զինուորական ու անտեսական վիճակը նկատողութեան առնելու հարեւասիրական բուն զգացումէ մը թելադրուած՝ չատ անգամ պատերազմ կը հրատարակեն աւելի զօրաւոր պետութիւններու դէմ, անշուշտ նիւթական ու բարոյական մեծամեծ զոհողութիւններ ընելով։ ո՛ր սակայն ժխտական արդիւնքի մը կը յանգի յաճախ։ Ոմանք բոլորովին

կործանած են հետեւելով նոյն սխալ ուղղութեան և ուրիշներ՝ իրենց ազատութիւնը փոխանակած են գիտութեամբ։ Այսպէս դարձեալ մասնելով անհատական կեանքի մէջ երկու անպատահելիւններու առջեւ պիտի գտնուին ինքզինքնին, ոմանք սարապայման ցաւակցութեամբ կ'ուզեն շատ բան արժեցնել իրենց անձերը՝ առանց սակայն իրապէս բան մը արժելու։ Ուրիշներ ծայրայեղ համեստութեամբ չեն համարձակիր ո՛ր և է գործի կամ խնդրի միջամուխ ըլլալ, պարզապէս իրենց անձնական սուտելութեանց անգէտ ըլլալով։

Մարդս ուսումնասիրելով իր անձը, կ'զգայ թէ ինքը կ'հպատակի օրէնքի մը, և թէ պէտք է յարմարցնէ իր կեանքը նոյն այդ օրէնքին։ Իր գիտակցութիւնը նոյն իսկ կ'վկայէ թէ իրմէն կախում ունի ձգտիլ ու յառաջանալ դէպի կէտ նպատակը, որ գործնականացումն է բարիին։ Բարիին այս ըմբռնումովն է որ մարդս կ'որոշէ բոլոր այն պարտաւորութիւնները զորս ունի դէպի իր անձն ու դէպի իր նմանները, համոզուած ըլլալով թէ՛ երջանկութիւնն ու բարոյականութիւնը կախում ունին այն եղանակէն, որով մարդս կը նկատէ ու կ'հասկնայ իր բնութիւնը։ Եպիկուրեանները մարդուն մէջ կ'տեսնէին միմիայն զգայականութեամբ օժտուած էակ մը՝ սահմանելով անոր հաճոյքը իրրեւ միակ նպատակ։ Բացայայտ է թէ այդպիսի դրութեան մը մէջ կարելի չէ գտնել ո՛ր և է պարտականութիւն հանդէպ հայրենիքի մարդկութեան և ընտանիքի։ Ստոյիկեանները, ընդհակառակն, մարդուն մէջ միմիայն բանականութիւնը տեսնելով կ'մերժէին զգայականութիւնը և կը պնդէին թէ առաքինութիւնը կ'ըսէ երջանկութեան համեմուտ համար։ Իրողութիւնները սակայն կը հերքեն այս տեսութիւնը, վասնզի շարունակական ձգտումն ու աննպատակ ջանքը, որոնք Սթոյիկեանին համար նոյնիսկ կ'կազմեն կեանքին առանցքը, ուր ուրեմն կ'յանգին լքումի ու վհատութեան։ Այսպէս մարդկային բնութեան թերի ծանօթութեամբ Եպիկուր-

հաններն ու Ստոյիկեանները իրարու ներհակ ուղղութեամբ հաւատարմացէս կը սայթաքին ճշմարտութենէն, վառնզի մեր էութեան վերաբերութեամբ ամփոփ ուսումնասիրութիւն մը կ'ցուցնէ թէ մարդս ոչ բոլորովին բանական է ո՛չ բոլորովին զգայական, այլ երկուքին խառնուրդը: Իմաստութիւնը կը կայանայ ուրեմն այս երկու ներհակ տարրերը իրարու հետ հաշտեցնելուն մէջ. և ահա ճիշտ այս նպատակով է կարծես որ «Պլատոն» ըսած է «ինքնաճանաչութիւնը իմաստութիւն է»:

Փորձով հաստատուած իրողութիւն մըն է թէ՛ մարդս կը տածէ իր մէջ ընտանի գաղափարներ, որոնք չեն կրնար վերաբերիլ ժամանակաւոր ու պատահական մարդուն, այլ այն էակին, որ մշտնջենական է ու անանց: Այսպէս ուրեմն ինքնաճանաչութիւնը ո՛չ միայն Աստուծոյ գոյութիւնը հաստատելու միջոց մըն է, այլ նաեւ անոր բնութեան մասին գաղափար կազմելու, քանի որ մարդ էակն ամէնէն կատարեալ գործն է Աստուածութեան: Ասկէ զատ եթէ կ'ընդունինք թէ ամէն արգասիք պատճառ մը ունի, հետեւապէս ամէն կատարելութիւն բովանդակող արդիւնք պէտք է ունենայ պատճառ մը: Եւ արդէն մասկածութեան բոլոր կանոններուն հակառակ է ենթադրել իմացական էակներ՝ առանց իմացական պատճառի:

Ամփոփելով ուրեմն կրնանք ըսել թէ՛ ինքնաճանաչութիւնը աւելի օգտակար է քան ո՛ր և է գիտութիւն: Եւ ստուգիւ այն մարդը՝ որ լաւ ուսումնասիրած է իր անձը, ճշդած է նաեւ իր յատկութիւններուն սահմանը: Եւ ով որ կը ճանչնայ իր կարողութեան տարողութիւնը՝ գիտէ նաեւ իր պարտականութիւններն ու նպատակը, որոնց իրագործումին կը ձգտի, ընդունած ըլլալով որ մեր բարոյական կեանքը կախում ունի մարդկային բնութեան յարաբերական հարցերու լուծումէն: Եւ վերջապէս, « ինքնաճանաչութիւնը, կ'ըսէ Պօսիւէ, կ'առաջնորդէ մեզ Աստուածգիտութեան»:

ՊԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Նառլը-Գաբու

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Իր անշահախնդիր ու խղճամիտ գործունէութեան համար ամէն գնահատման արժանի Կիլիկիոյ Որբախնամ Կեդր. Յանձնաժողովը Նոյ. 30 թուակիր պաշտօնագրով բոլոր հայ թերթերէն խնդրած էր աջակցութիւն ընծայել իրեն՝ որբախնամ գործին մէջ:

Յիրաւի այս գործը շատ ընդարձակ սահման ունի այսօր. ուստի աւելորդ չէր պատուական Որբախնամ Մարմինի մը կազմութիւնը Նպաստից ու Միջազգային Յանձնաժողովներու քով: Այս երկուքը Կիլիկիոյ ընդհանուր կարօտութիւնը հոգալ կը ջանան. իսկ Որբախնամը կը մրտածէ տարաբախտ Կիլիկիոյ նախնաքան դժբախտ որբերը՝ որ թիւով հինգ հազարէ աւելի են:

Եգիպտոսի Հայկական Բարեգործութեան Ընդհանուր Միութեան եղբայրը կրնայ նկատուիլ այն, ցորչափ ուշանայ նոյն Միութեան Կ. Պոլսոյ Մասնաճիւղի կազմութիւնը, որբերը առանց յետաճըման խնամելու հրամայողական պահանջքին առջեւ ինչո՞ւ մարմին չառնէր այժմ իսկ այդ Մասնաճիւղը հակառակ եղած ցնծաութի հաւաստումներու:

Բայց Եգիպտոսի Բարեգործականը անձեռնմխելի դրամագլուխ մը անգամ ունի, իսկ մեր Որբախնամին գանձը գրիթէ պարապ է. գացի տեսնուեցայ Պատ. անդամներուն հետ, որոնք առանց բացառութեան ազգասէրներ են և այս գործին փորձառութեամբ օժտուած:

Ուրեմն Տաճարի խմբագրութիւնն ալ երբեք չուզեր անտարբեր մնալ գերազանցապէս մարդասիրական այս մեծ գործին՝ որ հայ ու անուղ պիտի մատակարարէ անսուաղ որբերուն, հագուստ պիտի տայ զողացող խղճալի էակներու, ուսմունք ու կրթութիւն պիտի ջամբէ անոնց՝ իր բացած որբանոցներուն մէջ:

Բոլոր մընս Հայ թերթերը այս միջոցին իրենց խմբագրականներով ու բացած հանգանակութեան սիւնակներով կ'նպաս-

տեն Որբախնամի աշխատութեանց . զոր օրինակ Առաջոց Նոյ . 15 կիրակի օրէն ըսկսեալ Կաղանդէք կ'հայթայթէ Կիլիկիոյ որբերուն զանազան գեղեցիկ ձեռնարկներով . Զայն Հայրենեաց այս շաբթու 3 զրշ . գինով բացառիկ թիւ մը հրատարակեց ի նպատակ անոնց . այս կերպով յառաջ եկած ամբողջ հասոյթները կ'խոստանան պատկառելի գումարի մը հասնիլ , եթէ կորովի կամք չպակսի ամէնուս քով :

Տաճարի առաջնակարգ պարտականութիւնը պիտի ըլլայ եկեղեցական զօտը միշտ բարոյական բարձրութեան վրայ պահել , և գովելի գործքերով ու հիմնական փաստերով ապացուցանել թէ արգի եկեղեցականութենէն ալ կենսականութիւն մունի իր մէջ , ինչպէս նախկին հայրենասէր ու ազգասէր եկեղեցականութիւնները որոնք զիտցած են Ազգին հետ պատերազմի դաշտը երթալ , Ազգին հետ տառապիլ , ի հարկին նահատակուիլ , և այս մինչեւ վերջին օրերը :

Անցած տարի գահուեցան եկեղեցականներ , որոնք իրենց կարողութեանը չափով 30 , 15 , 10 , 5 , 3 , 2 և 1 ոսկի նըւերեցին Հայաստանի մէկ քանի գաւառներու սովեալներուն , սակայն այս անգամ ամբողջ Կիլիկիան սովամահ պիտի կորսուի , եթէ ձեռնադրութիւն զլանանք :

Որբախնամը միայն որբերու օգնութեան համեմուտ համար ամսական հազար ոսկիի պէտք ունի , ա'լ կրնաք հետեւցնել թէ ինչքան հոյակապ զբամազութիւն մը գոյանալու է գերբնական ճիգերով :

Այո' , մենք եկեղեցականներու կ'ըմբռնենք լայնածաւալ թշուառութիւնը . իբրեւ Բարութեան Աւետարանի հաւատարիմ պաշտօնեաներ Ս . Եկեղեցիներու բեմերէն , ամէն ատեն ինքնաբերաբար և ոչ թէ որ և է արտաքին թելադրանքով , բարեգործութեան յորդոր կ'կարգանք հոյ ժողովուրդին , որ գթասիրութեան զգացում ունի , բայց զգացման համեմատութեամբ չենք նպաստներ : Զշմարտապէս բարեգործործութիւն ընելու համար մարդ պէտք է իրմէ և իրեններէն բաւական զրկէ , ի'նչ

դասակարգի ալ պատկանի , հարուստ թէ միջակ :

Մենք այն հաւատքն ունեցանք թէ Կիլիկիոյ անպատմելի աղէտքէն ետքը հայութիւնը այս ըմբռնումով պիտի գործէ և իր համբաւուած գթասիրութեան շողջողուն ապացոյցները պիտի տայ : Եղիպտոհայը ճանչցաւ իր լման պարտքը , սակայն ո'չ Պոլսահայը : Եկեղեցւոյ բեմին վրայէն ու թերթերու մէջ ուղղուած սովադական թելադրանքներուն հակառակ Պոլսահայը այս ամառ իր գիւղագնացական հանդիսար նայեցաւ ամէն տարիներու պէս մեծամեծ ծախսերու ենթարկուելով , որպէս թէ հայութեան մէկ կարեւոր մասը անդին Կիլիկիոյ մէջ ահռելի փոթորիկ մը անցուցած չըլլար :

Զէրարժեք , իբր սգաւոր , տուները մնալ և լրջօրէն խորհիլ ու երկա'ր խորհրդակցիլ հայութեան անստոյգ ճակատագրին վրայ , արդեօք հայուն գիտակցութիւնն արթննալու համար ասկէ աւելի զօրուոր ցնցումի մը պէտք կար , այս տողերը կ'գրեմ խորին յաւով մը ու ներքին այրուցքով :

Գոնէ ամառը զուարթ անցնելէ ետք աշնան կաղզուելուած միտքերը յոգնէին հայութեան Ապագային համար . այս ընթացքով միայն Որբախնամը պիտի ազատէին խոշոր մտատանջութենէ մը : Բարեսէր ճանչուած ազգայնները ո'չ միայն հեռուները չմտածեցին , այլ իրենց մօտը եղող Կեդրոնականի 50 գաւառացի աշակերտները թողուցին որ ամիսներով տախտակներու վրայ պրակին . անոնցմէ մին Զէյթունցի ուշիմ պատանի մը քիչ մնաց գերեզման կրթար . . . :

Ալ բա'ւ է այսքան անհոգութիւն , ուրախ եղէք որ անցած դարնան մեծ վտանգէ մը ազատեցաք . ուրեմն հաւատալէք որ Աստուած բարեսէր Եղիպտոհայերուն պէս սահմանած է ձեզ նշանակելի գործերու և ուրախ օրերու : Ահ , եթէ Ատանա կործանած չըլլար հրաշքով' մը , կը մտածենք թէ այն տեղի հայութիւնը ուրիշ կերպով պիտի շարժէր : Քաղաքական ցնցումները ազգերու ապրելու եղանակը կը փոխեն , ինքնազարթուած . ներարկումներով : Լաւ

բմբռնեցէք այս լսածս, ո՛վ դուք օգնելու
կարող եղողներ, թո՛ղ զբեկանքը ձեր ար-
դի կեանքին անհրաժեշտ կանոնն ըլլայ .
ասով կրնաք առատօրէն նպաստել և կ'գաւ-
նաք մեծ բարոյականի տէր : Բանի որ փըր-
կուեցաք, պէտք է ձեր փրկանքը յօժարաւ
կամ նուիրէք զաժանօրէն վնասողներուն :

Եկեղեցական միութեան օտկան Տաճար
ամէն աստիճանի աշխարհականներու նը-
պաստելու հրաւէր կարգացած ասին, չի
մոռնար նաև որ եկեղեցականներս ալ
պարտաւոր ենք օգնելու լսող կարի :

Բարեգործութեան որ և է օրինակելի
չարժուժ մեր կողմէ՝ անմիջապէս աշխար-
հականները կ'խանդավառէ, եթէ մենք
մէկ տանք, անոնք տաւր տալու տրամա-
դիր են . այս է անոնց հոգեբանութիւնը :
Այլապէս չեն համակրիր և չեն հետևիր
մեզ :

Եթէ բարիքի իրական գործադրութեամբ
բարեկէրներու բանակին յառաջապահները
ըլլանք, ո՛րքան ահագին փոփոխում ու
բարեփոխում պիտի գտնենք մեր շուրջ .
այն ատեն եկեղեցական ու աշխարհական
հեռզնեւէ իրարու մօտ պիտի գտնուէր ու հա-
մաձայն պիտի ընթանան . մինչդեռ հիմա
յաճախ կանգնած են դէմ դէմի, իրարու
հակառակամարտ և անհամակիր : Որքա՛նը-
նամը մէկ եկեղեցական անդամ իսկ չունի :

Եկեղեցակ աններամբ արժանապատուու-
թեան մէջ որքան աւելի երեւանք, ա՛յնքան
աւելի նոր առաջնորդողներ կրը-
նանք հանդիսանալ : Այսպէս բարձր կը
մնանք աշխարհականներու առջև, որոնք
մեր ժողովուրդն են, և որոնց հայր կ'կո-
չուինք, սակայն ըլլալու ենք իսկական
հայր մեր բարութեամբն ու կատարելու-
թեամբը :

Կիլիկիոյ Որբախնամ Կեդր . Յանձնա-
ժողովին սքանչելի ու սրտառուչ կոչին
պէտք է պատասխանենք մենք բոլոր եկե-
ղեցականներս, Պաւոյ, արտասահմանի
թէ գաւառներու, մեր նուիրատուութեամբ :

Մանաւանդ կուսակիւծն եկեղեցական-
ներս այս տարի ևս կրցածնուս չափ պէտք
է լայնօրէն մանակցինք անուն որբերու
եղած հանգանակութեան : Ի՞մ աղքատի բա-
ժինս 5 (հինգ) գաղղ . ոսկի կը նուիրեմ,
իբր տարեկան իննալոյսութեան արդիւնք :

ՏԻՐԱՅՐ ՎԱՐՆԱՊԵՏ

ԻՆԹ. ԽՄԲ. — «Ուսմունք և կրթութիւն պիտի
չաւրիս անոնց» : Մենք կ'ուզենք աւելի այս կէտը շեշ-
տել : Որքերուն հաց սոյ միայն չքաներ . անոնց համար
անհրաժեշտ մանաւանդ կրթութիւնն ու դաստիարակու-
թիւնն է : Պէտք է խոստովանեմք թէ այս աւագ գործը,
ո՛րքան կենսական պլնական էլ դժուարի է որբերու
համար մասնաւորապէս : Փորձառութիւնը մեզ ցոյց
կուսայ թէ որբանոցները ցարդ ընդհանուր բաղձանքի
մը գոհացում տալու չափ աղիւսեալս չեն եղած
դժբախտաբար : Որք ուսանողներ, բացառութիւնները
յարգելով, դպրոցներէն դուրս ելած են իբրեւ ապի-
րախօսօրէն տղոն, անխնայօրէն ընթաց, անցիսակ-
ցօրէն յաւակնոս և անկշռապատօրէն խոստովանել
երխաւարդներ, որոնք խաւանքի կը հետապնդին և
պատրաստութեան թիկունք կը դարձնեն : Չեմ գիտեր
թէ որքի հոգեբանութիւնն է այս : Բայց ամեն պա-
րագայի մէջ այս ատորիմակ և քերես շահերուն
համար չափազանց նկատած այս խրական երեւոյ-
թիւն յոժուր կարեկան միմակ մը այդ նկարագրին
հասած որքին մէջ պէտք չի փնտել : Որքին մէջ ըս-
տեղծելու համար ազնիւ մարդը մահու չափ դասա-
պատեցի է անխնայս խղճաւորութեամբ մը և ան-
տաւաբան գրաստութեամբ մը իրապիսիւս անոր մէջ
ուղղակի կամ անուղղակի, այն բոլոր յոյժի տաւա-
ղութիւնները՝ որոնք օր մը պիտի չլինեն շիպացած,
փաստեալն ու փնայացած երխաւարդ :

Դպրեղի են, այո՛, անգործի չափախառն կեան-
քերու այդ անմեղ թիկունքները, բայց աւելի գոռելի է
մանաւանդ անոնցով կազմուելիս ապագամ որուն
պատասխանատուն մենք ենք ուղղակի : Նկարագրի
պէտք է մեղի, և ոչ թէ մակոյցներ՝ որոնք միայն
գիտեն անուղղով գոհանալ :

Մարդը պատասխանէ մեր, ունիմ նաև
աւագ պատրաստութիւն մը, — այդ մարդը արեւնե-
րու միջոցներ ձեռք բերել : Որքերուն պէտք է արդի-
ցնել նաև աւելաներ. մեր տեսական կեանքի երաշ-
խաւորութիւնը այդ բանին մէջ կը կայանայ :

Այս տարի փայտերէի գնելով մեկնել եղիցսոյ
Հայկ . Բարեգործական Ընդհ. Միութեան և Կիլիկիոյ
Որբախնամ Կեդր . Յանձնաժողովի լուրջ ձեռնարկները
այս նուիրական գործին ի սպաս, շնորհակալութեամբ
և գոհութեամբ կը յայտարարեմք թէ «Անաստուի Օսմ.
Երկարաւոր Հայ պաշտօնէից Ազգոցու Միութեան»
որոշած է 6 որբեր պահել Արմաշու Դպրեւանքին մէջ,
խաւանքիւրին յաշխաղելով տարեկան 8 ական ոսկի :
Մենք փաստ ենք թէ մեր եղբայրակից Տ. Մեսրոպ Ծ.
Վ. Կարոյեանի հսկողութեան տակ այդ որբերը բախ-
տաւոր պիտի ըլլան, եթէ մանաւանդ Ազգր գիտնայ
ինքն ալ իր կողմէ փայտերից թէ նկարագրու և թէ
բարոյապէս Ազգոցու Միութեան այս լուրջ խաղը :
Այս նպատակով արդէն Տ. Տիգրայր Ծ. Վրդ . Մարգար-
եան ալ նուիրած է 5 գաղղ . ոսկի Դպրեւանքի որբոց :
Միայն մենք պիտի փափաքեմք որ որբերը եւն պատ-
րաստութիւն իբրեւ ապագայ ուսուց, անձնուր, կա-
րող և յաւանքս ուսուցիչներ՝ որոնց շահ պէտք ունին
սրտահար Կիլիկիոյ՝ անխնայ մարդասէրու ժամա-
ղըրախոյր դարձած իւղն գիւղերը :

Գ. Վ.

ԿՐՕՆԱ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

(ԿԱՂԱՆԴՁԷՔ "ՏԱՃԱՐ" ԻՆ)

ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐԻԴ ՄԷՋ

Սաղմ. Ե. 8

Սուրբ սանարիդ մեջ առսրւան լոյսով
Քե՛զ կը բարձրացնեմ մաղբաններս բիւր,
Դո՛ւն ողորմութեանց, շնորհներու աղբիւր,
Խօսքերուս ականջ դիր, երբ ապահով
Քեզ մասուցանեմ իմ խոնարհ հայցումս,
Դու քազաւորս ես ու Դո՛ւն իմ Աստուած:

Սուրբ սանարիդ մեջ չարք չբնակիր,
Հրպարսներն աչիդ առջեւ չեն մրնար,
Սրտախօսներն ալ չար, բազմահրնար՝
Անկումի ձրգես փոսը անյարիր,
Զի Դուն սիրող չես անօրէնութեան
Ու նենգաւորներն կ'ասես յախտեան:

Սուրբ սանարիդ մեջ բայց՝ ես կը մըսնեմ
Ողորմութիւնովդ առաջնորդուած,
Երկրպագութեան համար գեհնամած,
Հո՛ն է ապաւենս ոսոխներուս դէմ.
Ով Տէր, Քու շաւիղդ շէկ իմ առջեւ,
Ուրիկ ես փախել կ'ուխտեմ յարատեւ:

Սուրբ սանարիդ մեջ չարերէ ազա՛ս՝
Որոնց կոկորդը գերեզման մ'է բաց
Խորհուրդներովը իրենց մըքամած,
Պիտի պահպանուիմ սիրովդ խանդակաք.
Մինչ անոնք իրենց սմբարճութեան
Մեջ մոլորահեռ պիտի ոչնչանան:

Սուրբ սանարիդ մեջ Քեզ յուսացողներ
Ուրախ, երջանիկ կը ցնծան յաւեռ,
Վայելումներու մեջ երանաւեռ,
Վստիճն ու վախեր բնա՛ւ հոգ չեն բներ.
Զի Դուն արդար իբր քէ վահանով
Պատես, պահպանես անդորր, ապահով:

Բերա

ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Մեր Յարգելի բաժանորդներէն յաշկապես կը խնդրուի որ հանին Տանարի տարեկան բաժնեգիրք փութացնել Վարչութեան՝ հանդեսիս չորրորդ քիւն ստանալի վերջ, ինչպէս արդէն շատերէն խոստացուած էր:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ԳԼՈՒԽ Ա.

Ծնունդ Պապա Համբարձում Լիմօնեանի.—

Հ. Միկաս Բժշկեան.— Տիպեանց բնակարանը իբրեւ Ռամպուլլէի ապարանք.— Յովնաննէս, Յակոբ եւ Անտոն չէլէպիք.— Պապա Համբարձումի կրած դժուարութիւններն իր հոգաւորացի առաջնորդէն.— Տիրացու Եղիշէ, Միքէլի Յովնաննէս, Գարբաղի Յարութիւն եւլն.— Պէզնեան Յարութիւն ամիրա եւ արքունի հարստապետ Գրիգոր Պալեան պատեպան կը նանդիսանան Պապա Համբարձումի.— Լիմօնեանի նշանաւոր հեղինակութիւնները.— Իր անուանի աշակերտներն ու որդիքը.— Այն ասէն լան երեւելի դպիրները:

Հայ ձայնագրութեան հիմնադիրը Պապա մակսնուանեալ Համբարձում (*) Լիմօնեան ծնած էր 1768ին ի Բերա: Հայրը՝ որ Խարբերդէն Կ. Պոլիս գաղթած համեստ Հռովմէադաւան ազգային մէք, կը կոչուէր Սարգիս, և մայրը՝ Կատարինէ, որոնք կը բնակէին Աղաճամիի Զուքուր փողոցը: Համբարձում չըբաւոր ծնողաց զաւակ, և այն ատենի Կ. Պոլսոյ ուսումնական վիճակը խիստ անշահաւոր լըլալուն պատճառաւ հազիւ կրցաւ թերի կրթութիւն մ'ստանալ, և իր դեռահաս տարիքին մէջ ստիպուեցաւ աշկերտութեան մասնել զերծակի մը քով. բայց որովհետեւ իւր կոչումն և գաղափարները բոլորովին տարբեր էին այդ ասպարէզէն՝ որուն առհարկի խոնարհելու պարտաւորած էին ծնողքը, չատ սնգամ կ'ըմբոստանար իր վարպետին հրամանները գործադրելու միջոցին. ընդհակառակն ամենայն սիրով միտքը պահել կը ջանար գիշեր ու ցորեկ երգելով անընդհատ իւր ի բերան սորված եկեղեցական եզանակները, զորս դատ ա-

(*) Պէտք չէ եփոթել զայս Զեռչեան Համբարձումի հետ, որ նոյնպէս Պապա կը յորջորջուէր:

ռած էր Զէննէ Պօղոսէն . (Շար Հայ կենսագրութեանց , մասն Ա . , Աբրահամ Յ . Այվազեան) :

Դժբախտաբար չունինք ի ձեռին Տրապիզոնցի Հ . Մինաս Բժշկեանի մանրամասն տեղեկութիւնները , զորս հաւաքած էր բազմաշխատ Միթարեանը՝ ժամանակակից ըլլալով Հայ ձայնագրութեան անմահ հեղինակին , որուն ընդարձակ կենսագրութիւնն ալ իր հետ տառած էր Վենետիկ , առանց լուսարանելու զմեզ գէթ փոքրիկ հրատարակութեամբ մը , որով հարկադրուած ենք Համարածուով մանկութեան վրայ այս համառօտ տեղեկութեամբ բաւականանալով անցնիլ իր պատանեկութեան շրջանին :

Այն միջոցներուն մեծ համբաւ կը վայելէր Տիւզեանց գերդաստանը , որոնք ընտելութիւն հաստատած էին ի Գուրուչէնի . նոյն ծովեզերեայ ապարանքը երաժշտական կաճառ մըն էր գրեթէ , ըստ որում ժամանակին բոլոր երեւելի անձնաւորութիւնները՝ որոնք հմուտ էին Արեւելեան եղանակներու , հոն կը յաճախէին ստէպ , գիտնալով այդ գերդաստանին Արեւելեան երաժշտութեան ջերմ սիրահար ըլլալը . նա մանաւանդ Յովհաննէս , Անսօն և Յակոբ չէլէպիները արուեստին քաջահմուտ էին և հետեւող . հետեւաբար իրենց բնակալայրը՝ որ Վոսփորի Եւրոպական ամիսնոյ վրայ գտնուելով օժտուած էր միանգամայն ընտելեան հրաշալի գեղեցկութիւններով , տեսակ մը Ռամպուլլէի ապարանք (*) կը համարուէր , ուր կը վիճարանուէին և կը լուսարանուէին Արեւելեան հրաշալի եղանակներու այլազան և ճոխ ելեւէջներու մասին վարարեալ խնդիրներ :

Համարածու լսելով այդ բարեհամբաւ գերդաստանին նկատմամբ խօսուածները ,

[*] Ռիպիէօ կարֆինայի վարչապետեան առաջին օրինակները՝ երբ օսլալին չէր հաստատուած Գաղղիական Ակադեմեան , Բարիզի մէջ Ռամպուլլէի ապարանք մը կար՝ որ ժամադրաւորէն եղած էր այն առեմի բոլոր զիտուններուն ու գրագետներուն :

ամէն ջանք ի գործ դրաւ և վերջապէս օր մը յաջողեցաւ ներկայանալ Յովհաննէս չէլէպիին , որ երաժշտութեան արուեստին լաւատեղեակ ըլլալով , հետաքրքիր եղաւ այդ տղուն հանդէպ , և գուշակելով միանգամայն որ ապագային մէջ շատ մեծ դեր պիտի ունենայ այդ պատանին իր ընտելեան ձիրքերուն շնորհիւ , առաւ իր ծրնողաց քովէն և բնակութիւն մը յատկացուց անոր՝ Գուրուչէնի ապարանքին մէջ , ուր Համարածու յաճախ առիթ կ'ուներ վարպետ խանէնտէներ լսելով իր արհեստը հետզհետէ մշակելու և կատարելագործելու , որուն ամբողջ հոգւովը կը բաղձար ի տղայ տիպ . (կենսագրութիւն Հայ երաժշտաց , ձեռագիր , Յովհաննէս Շալճեան) :

Դար մը առաջ Հռոմէական ազգայինք տակաւին բաժնուած չ'ըլլալով մեր եկեղեցիէն , Համարածու իւր փափաքանաց յազուրդ տալու համար շարունակ կը յաճախէր մայրաքաղաքիս գլխաւոր եկեղեցիները և հոն դպրութիւն կ'ընէր : Այդ պաշտօնին նկատմամբ ջերմ հակում մ'ուներ նաեւ շնամբելով Տիւզեան Յովհաննէս չէլէպի , դասախօս կարգեց զինքը Վենետիկեան վարդապետներու տեսչութեան ներքեւ գտնուող Լուսաւորչեան վարժարանին , որ Լատինացեոց Ղալաթիոյ Ս . Գէորգ Եկեղեցւոյն քովն էր : Դասախօսութեան մէջ քիչ շատ իր ապրուստը ապահովելով , և երբեմն ալ գրագրութեան պաշտօն վարելով արքունի ճարտարապետ Պալեան Գրիգոր ամիրայի քով , (Բաղմաւէպ , 1873 , Հ . Եղուարդ Հիւրմուզեան) Համարածու սկսաւ յաճախել նաեւ Ֆէնէրի երաժշտապետ Ռոփրիոս Յոյն Փռալթիի քով , որ Պէզճեան Յարութիւն ամիրայի հրամանաւ կը դասախօսէր ուսումնարանի մէջ և Հայ տղայոց մեղեդիներ և քրթիմաններ կ'ուսուցանէր Յունական ձայնագրութեամբ :

Պէտք չէ զարմանալ թէ մեր եկեղեցեաց մէջ ի հնունդ մուտ գտած էր Յունական եղանակը : Վասն զի Հայ ձայնագրութեան հրաշալի գիւտէն առաջ բոլոր մեր հին դպրապետները Յունական ազգա-

յին եղանակի ազդեցութեան տակ զբա-
նուելով ըստ այնմ կ'երգէին Ս. Պատա-
րագի արարողութեանց մեծագոյն մասը ,
նա մանաւանդ Տաղերն ու Մեղեդիները ,
որոնք անսխալ ազդեցութիւն մը
կ'ընէին ունկնդրին վրայ : Սոյն ապաւորու-
թեանց ներքե կը գտնուէր նաեւ Գրիգոր
դպիր Գապասագալեան՝ իր երկու երկա-
սիրութիւններն հեղինակած միջոցին , որոնց
առաջինն է «Գրքոյկ որ կոչի նուագարան» ,
սակաւ ի Կ . Պոլիս 1794 , իսկ երկրորդն է
«Գիրք երաժշտական» , ի լոյս ընծայեալ
յամին 1805 : Սոյն երկու հեղինակութեանց
մասին պիտի խօսինք ի կարգին :

Համբարձում գոհ չըլլալու միայն Թա-
թաւաղի Ռոմիրիսէն սովորելով Յունա-
կան ձայնագրութիւնը , կ'այցելէր նաեւ
թէքքէներու մէջ նուագող չէյիսերու և
տէրվիչներու , կատարեալ կերպով ըմբռ-
նելու համար անոնց երգած պէսթէներն
ու բիշթէները , որոնք առաջնորդեցին
զինքը այն մեծ գործին՝ որ պիտի անմա-
հաղնէր իր անունը :

Իր դատաւանդութեան միջոցին՝ Համ-
բարձում երկու տարի (1813-1815) շարու-
նակ աշխատեցաւ Ներսէս Շնորհալիի այն
քաղցրալուր եղանակներն ի զիր ամփո-
փելու . և այս կարգադրութեան համար
բաւական չհամարելով Եւրոպական ձայ-
նագրութեան հետեւիլ , (որ իր ելեւէջնե-
րուն մէջ չունի «նի» և «պի» տիէզները ,
որոնք անհրաժեշտ են արեւելեան եղանա-
կին համար) ետեւէ եղաւ Շարականի խա-
ղերուն նմանցընելով հայկական ձայնանի-
շերն հնարել , և եօթը ամբողջ ձայներու
անունները գնելով փուշ , էկորճ , վերնա-
խաղ , բէնկորճ , խոսրովային , ներքնա-
խաղ , պարոյկ ու անոնց նախկին վանկերը
միայն առնելով՝ անուանեց րօ , է , Վէ , բէ ,
խօ , նէ , պա : Յետոյ ամանակներն և չա-
փերն որոշեց ու դասակարգեց , ապազո-
յին թողլով հեաղհեաէ կատարելագործի
իւր անընդհատ աշխատութեամբ ձեռք բե-
րած գիւտը :

ԱՐԻՍՏՈՒԿԷՍ ԳՉ , ՀԻՍՏՐԻԲԱՆ .

(Շարունակելի)

Թ Ա Տ Ե Ր Ա Կ Ա Ն

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ

ԿԱՄ

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՈՒՄԸ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ (*)

Մէկ նախեղանով , վեց արարուածով եւ մէկ
վերջաբանով .

Գ Ր Ե Ց

ԳԱՐԵԳՐԵՆ Վ. ԽԱՉՈՍՏՈՒՐԵԱՆ

(Ի Դպրեվանդ)

(Շարունակութիւն Գ. թիւին)

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

ՏԵՍԻՒ Ա.

[Թագաւորական պալատին մէջ]

Արսաւես

(Առանձին՝ կ'երբեւեկէ անհանգիստ սրահին մէջ
որուն հակացը գետնուած է քաղաւորական զանր.
այ ու ձախ կողմեր արողներ շարուած : Սրահին
մէկ անկիւնը կը տեսնուի սեղան մը , վրան քուրք
մը՝ որուն կը յառէ յաճախ Արսաւես իր աչքերը) :

(կը մեկնախօսէ)

Խնայել հայրենիքին . . . օ , ուրեմն հայ-
րենիքի դաւաճան մը նկատուած եմ ես . . .
ծանր են , իսկ'ստ ծանր վարդապետին յան-
դիմանութեամբ խառն յորդորական այս
խօսքերը :

(կ'երթայ սեղանին առջեւ , քուրքը ձեռքը կ'առնէ ,
վրդովում ակնարկ մը կը նետէ անոր վրայ , կը յա-
ռայէ , դարձեալ կը դնէ քուրքը սեղանին վրայ եւ
կը շարունակէ իր մեկնախօսութիւնը՝ արողի մը
վրայ նստած եւ աչքերը գետնի սեւեռած) .

Հայրենիքը վառնքի մէջ է . . . և ինչո՞ւ
. . . վառն գի՞ . . . ա՜հ , Աստուած իմ . . .
վառնգի բարոյապէս ինկած մ'եմ , վառնգի
երիտասարդ մ'եմ՝ որ . . . և ասի ծանր
յանցանք մ'է , մոլորանք մը՝ որ հայրենիքի
կորուստը կը պատրաստէ . . .

(ընդոստ ռսի ելլելով եւ երբեւեկելով)

Օ ֆ . . . չեմ հասկնար , սիրտ մը կրն'ն ալ
դատաւարանելի է , և ի՞նչ առնչութիւն
կ'անքը փափախող սրտի մը և երկիրը կա-
ռավարող օրէնքի մը միջև . . . Թագաւոր
մ'եմ , այո՛ , և կ'զգամ թէ պարտական
նութեան ծանր լուծ մը կայ վրաս օրէնքի
հեղինակութեամբ հարկադրուած , բայց . . .
երիտասարդ մ'եմ միանգամայն , կարօտ . . .
է՛հ , ս'րքան անասնելի է այս վիճակը ,

(*) Ամէն իմաստնք հեղինակին վերապահուած է :

ուր կը գտնուիմ քանի մը տարիէ ի վեր :
կամբիւր ծաղիկ հասակի մը մէջ, օ՛հ, ան-
տանելիք է, անտանելիք... .

(Կը մօտենայ պատահական եւ արքայ մը մայ
նոսած դուռը կը դիտէ, ճարտակելով մենախո-
սութիւնը) :

Օր մը չկրցայ ազատ օդ շնչել : Տե՛ս քնու-
թեան սա գեղեցկութիւնները, սա նկա-
րագեղ դաշտաճովիտները, սա ներշնչող
լեռներն ու ձորերը, որոնց մէջ կրիտա-
պարզ թաղաւորի մը սիրտն է որ կը նե-
տահարուի, անգուլթ որսորդէն վերաւո-
րուած սիրամիմունջ աղաւնիին նման :

(մտնացայց բնելով)

Ա՛խ, տե՛ս, տե՛ս, մաճը բռնող սա
երկրագործը, կուրծքը տրեռն, ճակատը
քրտնաթոր, դէմքը կայտառ ու զուարթ,
սիրտը երգը չրթներուն վրայ. ինծմէ չա՛տ
աչեի իրջանիկ է նա... .

Արքայական թագը չարչարանքի թակը
կըլաւ գլխուս, մեծութեան ու շուքի ամ-
ղանս՝ հեծութեան ու սուգի արցունքնե-
րս ծածկող քօղ մը կըլաւ լոկ ինծի : Յա-
ւազին երկունքերով ծնած էր զիս մայրս
ցնծալից կեանքի մը ծոցին մէջ. խնծղալից
խանդավառութեամբ մը նետեց զիս աղզս
ստառապազին պաշտօնի մը գրկին մէջ :
Տառապիլ ու տառապիլ, այս պիտի բլլար
իմ կեանքի բաժինը. ստառապիլ սրտով,
տառապիլ իմ ազգակիցներուս կողմէ :
Սէրը ներքնապէս և ասեղութիւնը արտաք-
նապէս, երկունքն ալ անշէջ, երկունքն ալ
անողոք :— Բայց իրա՛ւ է որ սէրը, որով
կ'ուզեմ ապրիլ, մահացու թոյն մը կ'ըլլայ
հայրենիքին, ժողովուրդիս համար... . Ի՛նչ
անմուտթիւն... .

(Ոսֆի կ'ելլէ, կը մօտենայ սեղանին, բուրբ կրկին
ձեռքը կ'առնէ եւ ցած ձայնով կը կարգայ հետեւեալ
պարբերութիւնը) :

«Երիտասարդի խօլ սէրը անհատ մը
միայն կ'ապրեցնէ, յաճախ ի վնաս բազ-
մաթիւ անհատներու, երբ մանաւանդ
բարձրագոյն աստիճանաւորութիւն մը սրբ-
տին մէջ բոյն կը գնէ այն : Անով վերա-
ւոր սիրտը՝ իր ե՛տը կը շինէ իր կուռքը
և ուրիշներու ետերով զոհեր կը պատ-
րաստէ այդ լպրըշ կուռքին» :... .

(Երկիւկած սարսուռով մը բուրբ ձեռքն ձը-
գելով եւ մտախոն) :

Վրդովիչ իրականութեան մը լուրջ ու
անկեղծ շնչաւ չիկա՞յ արդեօք Մետրոպի
այս տողերուն մէջ... . Ու երեակայիլ թէ
իմ պաշտած Դադանիս զոհը պիտի ըլլայ
ամբողջ ժողովուրդ մը... . Բայց կարելի՞

բան է... . Ո՛չ, ո՛չ, իմ սէրս պատրուակ
մ'է լոկ : Անոնց ասեղութիւնը ո՛չ թէ իս-
կապէս սիրոյս՝ այլ թողիս դէմ է ապս-
հովարար : Եւ ո՛վ իսկ փափաքեցաւ այս
գաւաղանին՝ որ ա՛յնքան փշալից է. ու
երեակայիլ թէ՛ երիտասարդ հասակս պէտք
է չարչրկուի այդ սայրասուր փուշերուն
մէջ, հրաժարելով բոլոր այն հաճոյքներէն՝
որոնք կրնային զիս երջանիկ ընել :

Բայց թէ իսկ սիրոյ բոցը չոռնենամ դաւա-
դրութիւնը պիտի հեռանայ իմ պաշտէն :
Հը՛հը՛. և նախարարները սիրոյ համար
պիտի ամբաստանեն զիս Տիգրանի առջև,
որուն գահակալին ի՛նչ կ'նստի և անբա-
րոյական մ'ըլլալը ամէնուն ծանօթ է :
Դաւաճաններ, քաղաքական յանցանք
մը պիտի վերադրեն ինձ անշուշտ և Տիգ-
րան իր նպատակին պիտի հասնի... .

Սակայն միթէ այս ամէնուն մէջ պատառ-
խանատութեան բնա՛ւ բաժին մը չունիմ
եւ... . ա՛հ, ծերունի հայրապետին վերջին
խօսքերը, գորովի արցունքը, յանդիմա-
նական սասան ու յորդորը, Մետրոպ վար-
դապետին սա թուղթը... . Թագիս նախան-
ձախնդրութիւնը կը յանձնարարեն ինձ մէկ
կողմէ, ազգիս արժանապատուութեան
պահպանութեան պահանջումը կ'ընեն միւս
կողմէ... . Բայց այս ամէնուն մէջ հա՛րկ է
մուռալ սրտի պէտքը... . Իսկ եթէ սրտը
զեղծած է իր պաշտօնին մէջ... . Ո՛չ, ո՛չ,
սէրը մահուանէ աւելի բուռն է, օ՛հ անդր
ի բա՛ց այս սե ու դաժան խորհուրդները... .

Ձայն մը

Արտաշէ՛ս...

Արտաշէս

(Շուարած)

Աստու՛ած իմ... .

Ձայնը

Արտաշէ՛ս...

Արտաշէս

(Շփոթած չորս կողմի նայելով)

Ո՛վ է այն... .

Ձայնը

(Մեղմ)

Ես այն իմ որուն ռսկորներն իսկ հան-
գիստ չեմ թողուր գերեզմանին մէջ... .

Արտաշէս

Ի՛նչ կը լսեմ, Տէր Աստուած, հօրս
ձայնն է... . իրա՛ւ է... .

Ձայնը

Անիծեա՛լ ըլլայ այն օրը՝ ուր զբեղ ծը-
նաւ մայրդ... .

Արսաւես

(Բոլորովին յուշակոթոյս)

Ո՞վ եւս դու... .

(Իմին իրեն)

Իրա՛ւ է որ հօրս ձայնն է... .

(Պահ մը լուռ մնալէ վերջ)

է՛ , ո՞վ կայ դուրսը :

Մանկլաւիկ մը

(Անպարտաճնով ներս մտնելով)

Հրամայէ՛ք , Տէր իմ :

Արսաւես

Ո՞վ կայ դուրսը :

Մանկլաւիկ

(Շփոթած)

Ո՛չ ոք , Տէր իմ :

Արսաւես

Կը ստես , անպիտան , դուրսէն ձայն մը
լսեցի :

Մանկլաւիկ

(Տնկունքով)

Ի՛նչ ձայն , Տէր իմ :

Արսաւես

Ձայն մը , վրդովիչ ձայն մը... .

Մանկլաւիկ

Ո՛չ , Տէր արքայ , հանգիստ եղէք :

Արսաւես

է՛ , լա՛ւ , գնա՛ ուրեմն :

(Մանկլաւիկը խնայողով կը մեկնի. եւ ինքը
կ'սկսի երթեւելիլ՝ կասկածոտ ակնարկներ նետելով
չորս կողմը եւ խօսելով).

Ոչ ոք չիկայ , իսկ ձայնը... .

(Քիչ մը յուշաբերելով)

Մ , բաւական յիմար եմ . գերեզմանէն
ձայն կրնա՞յ գալ... .

Ձայնը

(Խիստ մեղմ)

Վա՛յ քեզի... .

Արսաւես

Ա՛հ , սերտս , չափազանց վրդովուած ես
դու , այս ձայնը քենէ կուգայ... .

ՀԱՄԱԿՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՔԱԶԱԼԵՐ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՊԱՐՏԲ ՄԸ

ՆՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տաճարի խմբագրութիւնը շնորհակալու-
թեան պարտք մը ունի մայրաքաղաքին
մէջ եւ գաւառներու անկիւններէն , նաեւ
քաղաքակրթութեամբ աշխարհի ոտսաններէն

Վարչութեան հասած համակրանքի ջերմ
խօսքերուն եւ գործնական արտայայտու-
թիւններուն համար :

Երկրորդ թիւին մէջ արդէն առիթն ու-
նեցանք հրատարակելու լրջամիտ ու կրօ-
նասէր անձնաւորութիւններու նուիրա-
տութիւնները՝ դիւրացնելու համար հը-
րատարակումը կրօնական թերթի մը , ո-
րուն անհրաժեշտութիւնը առաւել քան
կրթեք զգալի դարձած է այսօր : Անկէ ի
վեր հասած բազմաթիւ նամակներ , բա-
ժանորդներու ցուցակներով , կը քաջալերեն
զմեզ աննուազ եռանդով մը փարելու լա-
կուած գործին , հաւատարիմ մնալով միշտ
մեր նախագծած ուղղութեան եւ նպատա-
կին , եւ անգամ մ'ալ կուգան ամբապնդել
մեր համոզումը՝ թէ կրօնքի սէրը չէ ցամ-
քած բնաւ եւ չկրնար ցամքիլ Հայ ժողո-
վուրդին սրտին մէջ , ինչ թարգամեցնող
խորշակներ ալ փչեն անոր դէմ :

Միայն կը փութանք յայտարարելու նոր
տարրի առիթով թէ Տաճարի մէջ պիտի
բացուին նաեւ էջեր , հոն լուսարանելու հա-
մար ժողովուրդին Կրօնա-բարոյական առ-
օրեայ կեանքին հետ առնչութիւն ունեցող ,
ինչպէս նաեւ Կրօնա-եկեղեցական զանա-
զան կենսական հարցերը՝ որոնց մասին ունէ
Հայ անհատ , հոգեւորական թէ աշխար-
հական , պիտի ուզէ հարցումներ ուղղել
խմբագրութեանս , ճիշտ ինչպէս երբեմն
կ'ըլլար Լոյս կրօնաթերթին մէջ :

Ակզբունքով անտարբեր գտնուելով որ
եւ է փրկուն եւ ոչ-չինիչ խժրժանքի հանդէպ ,
խմբագրութիւնս սիրով եւ շնորհակալու-
թեամբ կը լսէ ու պիտի լսէ լուրջ ու
բարեացակամ դիտողութիւնները , եւ նոյն
իսկ քննադատութիւնները , որոնք ո՛ր կող-
մէ ալ եկած ըլլան՝ անհրաժեշտ եւ օգտա-
կար են մարդկային ամէն ձեռնարկի կա-
տարելադրութեան , արդիւնաւորումին եւ
յաջողութեան համար :

Հարցումները պէտք է ըլլան կարելի
եղածին չափ պարզ եւ հասկնալի :

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՐՏՕՆԱՏԵՐ

ՀՄԱՅՆԱԿ ԳՀ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՎԱՐԻՋ.— ԶԵՆՈՆԴ ԻՎ. Վ. ԴՈՒՐԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱՊԵՏ.— ԴԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Օսմանեան Գործակցական Ընկերութեան
Պապր Ալի ճաւախի Սէփերնիլէր փողոց թիւ 27

Մարտիկա
Նիկոմիդիա
Նիւ-Եօրթ
Շ. Գարանիսար
Ուսաւ
Պանսիւս-Պալլիստ
Պալսաւ
Պաճրաւ
Պարսիզակ
Պէ բոթ
Պրուսա
Ռուսուֆ
Ռոսոսթո
Սամսոն
Սեբաստիա
Սելանիկ
Սիմփրոնիսար
Սոֆիա
Տարսանիկ
Տեսեալուն
Տիարալէֆր
Տրապիզոն
Վառնա
Փարիզ
Քեօքանիա
Քեօքանեն
Քլի
Ֆիլիպե
Ֆրէզո

Հոգեւոր Տեսուչ Տ. Երէն Բնյ. Գալլիստ
Տ. Սոֆի Բնյ. Պրոֆիտ
Տօքթ. Թրիքաքան իտն
Գալիսիկ էֆ. Պէլլիստ
Կարապետ էֆ. Գեօքան
Առաջնորդ Տ. Կարապետ Մ. Վրդ. Մալլիստ
« Տ. Մալիս Ս. Երէն. Կէօքան
Աւետիս էֆ. Բէլլիստ
Յովա Նէն էֆ. Տ. Կարապետան
Հոգեւոր Տեսուչ Տ. Երէնիկ Վրդ.
Առաջնորդ Տ. Յովաննէն Ս. Երէն. Արշարունի
Տ. Մկրտիչ Բնյ. Մրջիկան
Առաջն. Փոխանորդ Տ. Բարթոլ Բնյ. Թաքման
Առաջնորդ Տ. Սահակ Մ. Վրդ. Օտարալան
« Տ. Թորոս Մ. Վրդ. Գուլիստ
Հոգեւոր Տեսուչ Տ. Սեբաստի Բնյ. Ներշապուն
Տ. Յովաննէն քնյ. Բրչրան
Տ. Մեարոյ Բնյ. Տ. Մեարոսան
Տ. Դանիսիոս քնյ. Տրէզան
Տ. Յուսիկ Բնյ. Գառաւորան
Առաջնորդ Տ. Զաւէն Վրդ. Տ. Երէն
« Տ. Իմանուէլ Վրդ. Պալան
Աւետիս էֆ. Զարաւանէլիս
Հոգեւոր Տեսուչ Տ. Վառնապուն Բնյ. Բիպարան
Առաջն. Փոխանորդ Տ. Մեարոյ Բնյ. Տէօքման
Տ. Մալիս քնյ. Մանիկան
Առաջն. Տեղապար Տ. Պալ Վրդ.
Տ. Տաճատ Բնյ. Դերձական
Ազն. Յակոբ էֆ. Նշկան

Պաշտոյ մէջ թերքիս վսեմաւան կեդրոնաւորին է՝

ՕՍՄԱՆԵԱՆ ԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

Պապր Ալի Եւսէնի, Սեփեքնիկ փողոց, Թիւ 27, եւ Զինաները Եօզուու, Պապրերը՝ Արմենակ Եազնեան եւ Անկ. Գրասունը, իսկ Բերայի մէջ, Մեծ-Փողոց, Սբ. Եսայիի դէմ ճապախաւ Դ. Կիլիկեանի խանութը:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

- 1⁰ Տ. Գնէլ Մ. Վրդ. Գալլիստ
- 2⁰ Տ. Տիրայր Մ. Վրդ. Մարգարան
- 3⁰ Տ. Ղեւնդ Մ. Վրդ. Դուրան
- 4⁰ Տ. Դրիգորիոս Մ. Վրդ. Պալաքան
- 5⁰ Տ. Գարեգին Վրդ. Սալաուորան
(Խմբագրապետ)
- 6⁰ Տ. Պարգե Վրդ. Դանիէլան
- 7⁰ Տ. Հմայակ Բնյ. Էքսէրճեան
- 8⁰ Տ. Արիստակէս Բնյ. Հիսարկան
- 9⁰ Տ. Զարմայր Բնյ. Կէօքան
(Սգ. Խմբագրապետ)

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

- 1⁰ Տ. Ղեւնդ Մ. Վրդ. Դուրան
(Վարիչ)
- 2⁰ Տ. Գրիգորիոս Մ. Վրդ. Պալաքան
- 3⁰ Տ. Հմայակ Բնյ. Էքսէրճեան
(Արտիստ)
- 4⁰ Տ. Խորէն Բնյ. Յարութիւնան
- 5⁰ Տ. Սուքիաս Բնյ. Պալլիստ
(Գանձապետ)
- 6⁰ Տ. Պօղոս Բնյ. Պէլլիստ
(Արտիստ)
- 7⁰ Տ. Խորէն Բնյ. Վարդանան
(Արտիստ)
- 8⁰ Տ. Գեորգ Բնյ. Անանիան

«ՏԱՃԱՐ»Ի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԻԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դուր
Գաւառաց » »	40 »
Արժանահամանի համար տարեկան	10 ֆրանկ
Ձեռքէ կը ծախուի պրակը	50 փարայ

«Տաճար»ի վերաբերեալ վարչական գործերու համար պէժք է դիմել
Դ. ՆՈՒՐԵԻ Զ. Վ. ԴՈՒՐՆԱՆԻ

Իսկ խմբագրական գործերու համար պէժք է դիմել խմբագրապետ
ԴԱՐՆԴԻՆ Վ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ

ارمنيجه «داجار» غزتهسى اداره خانه سى
باب على جاده سى ابوالسعود زوقاغى نومرو ۲۷

Rédaction de la Revue «DADJAR».
27, Ru. Sépétdjiler, Av. de la S. Porte, Constantinople. (Turquie).

Խմբագրութիւն «ՏԱՃԱՐ» Կրօնա-եկեղեցական կիսամսեայ հանդէսի
Պապը Ալի ճատաւէսի Սէփէթճիլէր փողոց թիւ 27

ԱՐՏՕՆԱՏԷՐ
ՀՄԱՅՆԱԿ ԴԱՀԱՆԱՅ ԷԲՍԷՐՃԵԱՆ